Azg Ազգ

3 ՄԱՅԻՍ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 78(4697)

ISSN: 1829-1651

Մամուլը դեռ հասարակության օրակարգի մաս է

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ուրիշ էլ ո՞ր օրը, եթե ոչ Մամուլի ազատության, պետք է խոսենք մամուլի խնդիրների ու մեզ պատած ցավերի մասին, ուրիշ ո՞ր օրը պիտի փորձենք մեր խնդիրների հայելային արտացոլումը կազմակերպել՝ մեր ցավերը տեղ հասցնելու լրացուցիչ առիթն օգտագործելով:

Սկսենք լավ նոտայից. որ ասում են՝ հեռուստատեսությունը եւ էլեկտրոնային լրատվությունը դուրս են մղում մամուլը եւ այն էլ շատ արագ՝ սա թերեւս առայժմ հեռու է իրականությունից, քանի որ հենց հայաստանյան մեդիա-լրատվության հանրագումարը ցույց է տալիս, որ մամուլի հետ, այո, դեռ հաշվի են նստում, մամուլին հղում են անում ամեն օր, իսկ մեր լրատվական կայքերը շատ անգամ վաղ առավոտյան լրատվությունը սկսում են ոչ թե սեփական լուրերով, այլ թերթերի լուրերով, ու շատ անգամ թերթերի լուրերն ու վերլուծություններն են դառնում քաղաքական այս կամ այն ենթազարգացման շարժիչ ուժը: Մինչդեռ օնլայն լրատվության առկայության առաջին օրերից իսկ գուշում էին մամուլի մահը: Դրա պատճառները տարբեր են. նախ որ մամուլում աշխատում են շատ հաճախ փորձ ու հեղինակություն ունեցող լրագրողներ, որոնց խոսքը կշիռ ունի, երկրորդ՝ հեռուստատեսության ու, ինչու ոչ, լրատվական կայքի արագություն ապահովելու համեմատ, մամուլը լուրի լույս աշխարհ գալուց մինչեւ ուշ երեկո մտորելու, համեմատելու, զուգահեռելու ժամանակ ունի՝ լուրի տակից դուրս բերելու եւ մեկնաբանելու բոլոր ենթատեքստերը, ինչը լուրը նույն պահին տվողը չի կարողանում անել: Այնպես որ հաճախ մեկ օր առաջ տրված լուրի իսկական նշանակությունը հայտնի է դառնում տվյալ լուրի հաջորդօրյա մամուլային մեկնություններից: Գումարվում է այն, որ մեր հեռուստատեսության լրատվական ծրագրերում հաճախ սխալ պատկերացում ունեն հեռուստալրագրողին ներկայացվող պահանջների մասին՝ հնարավորինս երիտասարդ, հնարավորինս նվազ վարձատրվող, հաճախ՝ միայն միկրոֆոն բռնող նորավարս լրագրողուհիներ ունենալու ձեռնտու տարբերակին գնալիս մեր հեռուստաընկերությունները մոռանում են, որ լո՛ւրն է հենց ամենալուրջ եւ ամենադժվար ժանրը, ու այն հեռուստադիտողին այնպես պիտի մատուցվի, որ դրա իմաստն ու նշանակությունը տեղ հասնեն: Մինչդեռ մեր հեռուստալրատվության հենական այցեքարտն է՝ արագ, էժան, անորակ.... Մեծ մասամբ: Իսկ հաճելի բացառություններն ավելի են ընդգծում օրինաչափությունը: Իսկ մամուլը պետք է տասը չափի, մեկ կտրի, լուրը շուռումուռ տա, գուցե նաեւ խնդիրն է տարբեր: Այնպես որ հասկանալի է, երբ կարեւոր իրադարձությունների հաջորդ օրը ընթերցողների նոր հոսք է նկատվում դեպի թերթի կրպակներ:



Տես էջ 3

Հիմարության անպատժելիությո՞ւն, թե՞ անպատժելիության հիմարություն

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ապրիլի վերջին օրերին ԱՄՆ պետքարտուղարության բարձրաստիճան պաշտոնյա Քեյդենհաուի, Եվրոմիության հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի տարածաշրջանային այցից եւ ԵԱՀԿ Մխ վաշինգտոնյան բանակցություններից անմիջապես հետո ղարաբաղյան եւ ադրբեջանական զորքերի շփման գծում իրավիճակը կրկին սրվեց:

Սա արդեն կարծես դառնում է օրինաչափություն: Միջնորդների, միջազգային կառույցների ամեն մի հայտարարություն, որ «ղարաբաղյան խնդիրը ռազմական լուծում չունի», Իլհամ Ալիեւը պարտադիր զուգակցում է «ղարաբաղյան հակամարտությունը սառեցված չէ»՝ իր իսկ կողմից շրջանառված «գնահատականը հիմնավորող» սադրանքներով:

Իսկ որ շփման գծում հրադադարի խախտման գործողություններն արտոնված են ամենաբարձր՝ «գերագույն գլխավոր հրամանատարի» մակարդակով, դրանում կասկած լինել չի կարող: Միայն այն, որ վերջին լարվածության օրը «ղարաբաղյան պատերազմի վետերանները» հավաքվել են Աղջաբեդի շրջկենտրոնի մարզադաշտում եւ ըստ էության տոնել երեք հայ զինծառայողի սպանությունը, վկայում է վերոհիշյալը:

«Արդեն որերորդ անգամ Հայաստանից եկած հայերի եւ Լեռնային Ղարաբաղի անջատողականների միջեւ տեղի են ունենում կոնֆլիկտային իրավիճակներ (պահպանվում է բնագրի ոճը- Վ.Ա.), եւ ամեն անգամ նրանք իրենց հանցագործությունները փորձում են բարդել ադրբեջանական կողմի վրա: Ապրիլի 29-ի զինված միջադեպը տեղի է ունեցել այն բանից հետո (- Վ.Ա.), երբ Հայաստանի քաղաքացի զինծառայողը ավտոմատով սպանել է իր ծառայակիցներին: Դա է հայ զինվորականների մահվան բուն պատճառը, որը հայկական կողմը ձգտում է թաքցնել»,- սա Ադրբեջանի ՊՆ մամլո խոսնակի «մեկնաբանությունն» է:

«Դա հերթական հիմարությունն է, միջազգային հանրությանը մոլորեցնելու փորձ: Այդ տրագիկոմեդիայի նպատակն է թաքցնել սեփական գործողությունները»,- News. am-ի թղթակցին արդարացիորեն ասել է ԼՂՀ ՊՆ մամուլի պատասխանատու Սենոր Հասրաթյանը:

Այդուհանդերձ, ո՞րն է Ադրբեջանի հիմարությունը: Այն, որ կոպտորեն խախտում է հրադադարը, թե՞ երբ «մեկնաբանություններ» է անում: Ըստ ամենայնի՝ թե մեկը, թե մյուսը: Քանի որ երկու դեպքում էլ նա հայտնվում է հիմար վիճակում: Նախ, առանձին միջադեպերն ավելի են առարկայացնում կողմերի միջեւ ուժի չկիրառման մասին նոր համաձայնության ձեռքբերման հրամայականը, որովհետեւ գնալով ավելի ու ավելի պարզ է դառնում, որ ներկա դրությամբ բանակցություններում առաջընթացի հասնելու հավանականությունը գրեթե հասել է զրոյական նիշի:

Եվ երկրորդ, «հայաստանցիների եւ ղարաբաղցիների միջեւ հակասությունների» թեմայի այդքան հետեւողական շրջանառումն ինքնին վկայում է, որ շփման գծում սադրանքներ հրահրում է ադրբեջանական կողմը: Այն պարզ պատճառով, որ Ադրբեջանի ՊՆ-ն չի կարող տիրապետել նման «տեղեկատվության»: Դա ուղղակի քարոզչական կոպիս կաղապար է, որ ընդունակ է «ծուլել» միայն էլդար Սաբիրոգլուի անուղեղ երեւակայությունը:

Բայց երբ այս ամենը տեղի է ունենում «շփման գծում միջադեպերը բոլոր կողմերի մասնակցությամբ հետաքննելու» անհրաժեշտության մասին պարբերաբար հնչեցվող հավաստիացումներին գրեթե զուգահեռ, ապա ակամա հարց է ծագում. «Ապրիլի 28-29-ից մի քանի օր է անցել, ինչո՞ւ ԵԱՀԿ Մխ համանախագահները, ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Կասպրշիկը որեւէ կերպ չեն արձագանքում հրադադարի աղաղակող խախտման փաստերին»: Եվ արդյոք հենց դա չէ՞ պատճառը, որ Ադրբեջանի ՊՆ մամլո խոսնակի իրեն թույլ է տալիս ակնհայտ հիմարություններ ասել:

Տես էջ 2

Աշխարհի ամենաածիծաղելի եւ ողբերգական փշալարը

Երերուքի՝ անտանիք տաճարը Հայաստանում

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ
Անի-Անիզեմզա-Երեւան

Բագրատունի թագավորներից եւ նրանց թագավորության ժամանակ ապրած հայերից ոչ ոք չէր էլ կարող պատկերացնել, որ մի քանի հարյուրամյակ անց Հայաստանի այլ վայրերից Անի եկող հայերը կկոչվեն «տուրիստներ», եւ նրանց տեղափոխող ավտոբուսը՝ «տուրիստական»: Նույն կերպ եւ ոչ մի Բագրատունի թագավոր չէր կարող ենթադրել, որ իրենց կառուցած եւ իր գեղեցկության ու վեհությամբ հրիստոնյա աշխարհում բացառիկ՝ Անիի Մայր տաճարում քահանան աղոթք չի կարդա, հավատացյալը մոմ չի վառի, փոխարենը՝ միջնադարում դեռեւս գոյություն չունեցող հրդեհը իրենց ոչխարը անձրեւից կոպատպարեն Մայր տաճարի տանիքի տակ, իսկ պետական սահմանադրությունը կբաժանի հայի հողը հայի հողից: Այս ամենն այսօր՝ Անիի Մայր տաճարի կառուցումից 13 դար անց, իրականություն է, իրականություն է նաեւ այն, որ հայ-թուրքական սահմանի ողջ երկայնքով ձգվող հոսանքահատ փշալարի հարեւանությամբ ապրում են հայեր ու հիմնականում հրդեհ...եւ իրենց երեխաները:

«Կամուրջ սարքող եմ դառնալու»

Այդ երեխաներից 12-ամյա Հենրիկը դպրոցից հետո, ընկերների հետ ֆուտբոլ է խաղում Անիզեմզա գյուղի՝ ֆուտբոլի դաշտ դարձած արտերից մեկում: Հենրիկը ցույց է տալիս դաշտը. թերեւս աշխարհի եզակի ֆուտբոլային դաշտն է: Ունենալով ինչպես դարպասներ, այնպես էլ այս մարզաձեւի դաշտի համար գրեթե նույն չափերը՝ մի կողմից ամբողջությամբ պատված է փշալարերով. հայ-թուրքական պետական սահմանն է: «Երբեւէ չի՞ եղել, որ գնդակն անցնի Թուրքիայի տարածք», հարցնում եմ Հենրիկին: «Չէ, ամբողջ դաշտում չենք խաղում, էնպես ենք անում, որ փշալարից հեռու խաղանք: Ձիավորներն ասում են, որ հոսանք կա դրանց մեջ», պատասխանում է Հենրիկը: Հոսանքահատ փշալարերը, որոնց յուրաքանչյուր հոդում գրանցվում է հայ-ռուսական սահմանապահ կետերում, չի խանգարում, սակայն, Հենրիկին ու իր ընկերներին, երբեմն անցնել դրանք. երեխաներն իջնում են արդեն Թուրքիայի տարածքով անցնող Ախուրյան գետի հատված՝ ձորի մեջ:

Տես էջ 8

Թուրքերի 64 տոկոսը դեմ է կառավարության միջուկային ծրագրերին

Թուրքիայի բնակչության 64 տոկոսը դեմ է ատոմակայաններ կառուցելու իսլամիստ-պահպանողական կառավարության նախագծին՝ «գտնելով, որ երկիրը պատրաստ չէ ընդունելու նման տեխնոլոգիա: Այդ են վկայում «Յուրիեթ» թերթի հրապարակած հարցման արդյունքները, որոնց մասին հաղորդում է Ֆրանսպրեսը:

Հարցման մասնակիցների միայն 6,6 տոկոսն է կարծում, որ խաղաղ միջուկային տեխնոլոգիան օգուտ կտա երկրին: «Գրինփիսի» պատվերով հարցումը ապրիլի սկզբներին անցկացրել է A&G ընկերությունը:

Ընդդիմացողների բաժինը 70 տոկոսից ավելի է Թուրքիայի հարավում եւ հյուսիսում, որտեղ պետք է կառուցվեն առաջին երկու ռեակտորները: 86 տոկոսը չէր ուզենա բնակվել ատոմակայանի մոտակայքում:

Անկարայի կառավարությունը մտադիր է առաջիկա 5 տարում կառուցել 3 ատոմակայան՝ անտեսելով Ճապոնիայում պատահած միջուկային աղետը:

2010-ին Անկարայի եւ Մոսկվայի կնքած համաձայնագրով նախատեսվում է ռեակտոր կառուցել Ակկույուում (Մերսինի նահանգ), մինչդեռ բնապահպանները նախազգուշացնում են, որ այդ շրջանը սեյսմավտանգ է:

Թուրքիան նաեւ Ճապոնիայի հետ բանակցում է Սինոպում (հյուսիս) երկրորդ ատոմակայանի կառուցման հնարավորության շուրջը:

ԱՄՆ-ը գնծում է, բայց «Բեն Լադենի սպանությունը դեռ հաղթանակ չէ»

ԱՂԱՎՆԻ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՄՆ, Կոլորադո

Աշխարհում թիվ 1 ահաբեկիչ համարվող, մոտ երկու տասնամյակ «Ալ Ղայիդա» կազմակերպությունը ղեկավարած Ուսամա բեն Լադենի սպանության լուրի հետ CNN-ի «աղբյուրները», այլ մանրամասների մասին երբեւէ տեղեկանալու միակ հնարավորություն թողնելով ամերիկյանը, տեղեկացրին, որ բեն Լադենի դին սպանությունից անմիջապես հետո, «պահպանելով իսլամի ավանդույթները», հանձնվել է ծովին: Թեեւ պաշտոնապես արված հայտարարությամբ ամերիկյան ուժերը դիակը պահել են իրենց հսկողության տակ, վերոնշյալ աղբյուրները պարզաբանեցին, որ բեն Լադենի դին հանձնել են ծովին՝ նրա հետեւորդների ու գաղափարակիցների համար թաղման վայրը ուխտատեղի չդարձնելու նպատակով:

Մայիսի 1-ի ուշ երեկոյան, գրեթե կեսգիշերին Սպիտակ տան դիմաց մի քանի հարյուր մարդ հավաքվել ու ավելի շուտ մայիսմեկյան, քան ահաբեկչի սպանության լուրին արձագանք լինելու համատեքստում վանկարկում էին «ԱՄՆ, ԱՄՆ», ուրախության ու խնդության կոչերով, իսկ ամերիկյան հեռուստալիքները ցուցադրում էին, քիչ անց, նմանատիպ հավաքներն արդեն Նյու Յորքում եւ այլուր:

Բեն Լադենի սպանության լուրը տարածվեց շատ արագ, եւ գրեթե մեկ ժամ որեւէ պաշտոնական արձագանք չկար: Այդուհետեւ ուղիղ եթերով հանդես եկավ ԱՄՆ նախագահը՝ տալով, ըստ էության, միակ պաշտոնական հայտարարությունը: Բարաք Օբաման հաստատեց Բեն Լադենի սպանության լուրը, նշելով, որ տասնամյա վաղեմության՝ 2001-ի սեպտեմբերի 11-ի ահաբեկչության պատասխանատու, «Ալ Ղայիդա» կազմակերպության առաջնորդ Օսամա բեն Լադենի սպանությունը կամ ձերբակալությունը, հենց նախագահ դառնալուց անմիջապես հետո, դարձել էր առաջնահերթություն «Ալ Ղաիդա»-ի դեմ ԱՄՆ պատերազմում»:

Տես էջ 5

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Հայաստանի նախագահը Շվեյցարիայում է

Ուսի... Ադրբեջանը նոտա է հղել Շվեյցարիային

Երեկ Հայաստանի նախագահը պաշտոնական այցով մեկնեց Շվեյցարիա: Այցի ընթացքում նախագահը հանդիպումներ կունենա Շվեյցարիայի նախագահ Միշելին Քալմի-Ռեյի, Ազգային խորհրդի նախագահ Ժան-Ռենե Ժերմանիեի հետ: Նախատեսվում է նաեւ նախագահի հանդիպումը Շվեյցարիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Սերժ Սարգսյանը երեկ այցելեց Գրի եւ մամուլի 25-րդ միջազգային ցուցահանդես-տոնավաճառ, հայկական տաղավարում ծանոթացավ Հայաստանի եւ Սփյուռքի հրատարակչությունների տպագրած գրքերին, դիտեց «Հայաստանի 12 մայրաքաղաքները» ցուցադրությունը: Հայաստանի նախագահը ներկա գտնվեց նաեւ հայ մատենագրության թվանշանային գրադարանի շնորհանդեսին, այցելեց արդի արվեստի ցուցահանդես:

Ժնեւում մեկնարկած Գրքի միջազգային ցուցահանդեսի կազմակցությամբ Ադրբեջանի արտգործնախարարությունն իր բողոքի նոտան է հղել Շվեյցարիայի ԱԳՆ-ին: Ինչպես տեղեկացնում են հարեւան երկրի լրատվական գործակալությունները, Բաքուն դժգոհում է շվեյցարացի կազմակերպիչներից, որ «ցուցահանդեսի ժամանակ Հայաստանի տաղավարում ցուցադրվում են տարբեր նյութեր, որոնք խեղաթյուրում են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը»: Այս կապակցությամբ Շվեյցարիայում եւ Լիխտենշտեյնում Ադրբեջանի դեսպանատունը իր բողոքն է հայտնել Շվեյցարիայի ԱԳՆ-ին: Դեսպան Մուրադ Նաջաֆբեյլին ցուցահանդեսի կազմակերպիչներ Բեռնարդ Գուտինի եւ Ադելին Բոյի հետ հանդիպմանը իր վրդովմունքն է հայտնել, որ «Հայաստանի տաղավարում ցուցադրվող նյութերում պատմական ճշմարտությունը խեղաթյուրված է»: Դեսպանը պահանջել է հանել այդ նյութերը հայկական տաղավարից: Բեռնը պաշտոնապես դեռ չի պատասխանել Բաքվի նոտային, մինչդեռ «Ադրբեջանի տարածքային ամբողջականությունն ու պատմությունը խեղաթյուրող նյութերը» շարունակում են մնալ հայկական տաղավարում: Ավելին՝ դրանք հավանաբար կմնան այնտեղ մինչեւ ցուցահանդեսի փակումը՝ մայիսի 3-ը:

Հանրապետության նախագահի պաշտոնական այցի ընթացքում դժվար թե որեւէ մեկը «արտոնի» որեւէ նմուշի հանումը հայկական տաղավարից, մանավանդ որ դրանք ոչ մի երկրի եւ ոչ մի պատմության խեղաթյուրման մասին չեն:

Հ. Ա.

Թամար Պողոսյանը խախտել է «Հիմնադիրների մասին» օրենքը

Ապրիլի 29-ին կայացել է «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստը, որի ընթացքում քննարկվել է հիմնադրամում ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայության կատարած ուսումնասիրության արդյունքները: Հիմք ընդունելով պաշտոնական փաստաթղթերում բերված փաստերը, խորհուրդն արձանագրել է, որ «հիմնադրամն իր կանոնադրական գործառույթներն իրականացրել է մասնակիորեն, իսկ հիմնադրամի գործադիր տնօրեն Թամարա Պողոսյանը գերազանցել է իր լիազորությունները, խախտել «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի եւ կանոնադրության պահանջները, ժամանակին չի կատարել հոգաբարձուների խորհրդի որոշումը»:

Քննարկումների արդյունքում «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը միաձայն որոշել է՝ «Հիմնադրամի գործադիր տնօրեն Թամարա Պողոսյանին հայտարարել խիստ նկատողություն եւ դիմել Վերահսկիչ պալատին՝ կազմակերպել հիմնադրամի գործունեության ֆինանսատնտեսական համալիր ստուգումներ»:

Խորհրդի նիստում միաձայն «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ է վերընտրվել Հրանուշ Հակոբյանը:

Մ. Մ.

Սեմինար գիտնականների ու գիտությունը լուսաբանող լրագրողների համար

Մի քանի անգամ «**Ազգը**» գրել է, որ ձեւավորվել է գիտական լրագրության խումբ գիտության ոլորտն ավելի լավ լուսաբանելու համար: Գիտությամբ հետաքրքրված լրագրողների առաջին սեմինարը կազմակերպվել էր Բյուրականի աստղադիտարանում, որին ապրիլի 19-ի համարում «**Ազգը**» եւս անդրադարձել էր: Խմբի հաջորդ սեմինարը լինելու է մայիսի 6-ին ժամը 18.00-ին՝ ԳԱԱ գիտակրթական կենտրոնում: Թեմատիկ սեմինարը լինելու է արտերկրային քաղաքակրթությունների վերաբերյալ: Սեմինարին կարող են մասնակցել ինչպես գիտությունը լուսաբանող լրագրողներն, այնպես էլ գիտնականները: Մասնակցելու համար ցանկացողները կարող են գրանցվել՝ ուղարկելով նամակ aregmick@yahoo.com կամ aregmick@aras.am հասցեներին: Զեկուցումների համար դիմելու վերջնաժամկետը մայիսի 4-ն է, որից հետո կկազմվի սեմինարի վերջնական ծրագիրը: Իսկ վերջնական ազդագիրը մասնակիցներին կուղարկվի մայիսի 5-ին:

Ի. Պ.

Հիմարության անպատժելիությո՞ւն, թե՞ անպատժելիության հիմարություն

1-ին էջից

Ուշադրություն է հայցում իրողությունը, որ պաշտոնական Բաքուն 4 որ շարունակաբար քար լռություն է պահպանել եւ խոսել միայն մայիսի 2-ին: Չի՞ հասկացվում դրանից, որ ադրբեջանական կողմն սպասել է, որ միջնորդները որեւէ հայտարարություն կանեն: Եվ կատարյալ համաձայնություն է ձեռք բերել, երբ համոզվել է, որ ՄԽ համանախագահներից ու ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակից արձագանք չի լինելու:

Ահա այս եզրահանգման նկատառմամբ ի՞նչ արժեք ունի միջնորդների հրապարակային պացիֆիզմը: Չարժե՞ ենթադրել, որ՝ ոչ մի: Դա ընդամենը «հերթապահ» հայտարարության մի դարձյալ կաղապար է: Այս դեպքում՝ «ձուլված» ԵԱՀԿ քարոզչաբանական «ձուլարանում»:

Թերեւս այդպես էլ կա: Ուստի էական է գիտակցել, որ ոչ թե հիմարությունն է անպատժելի, այլ՝ անպատժելիությունը՝ հիմարություն: Ավելի բացահայտ ասած՝ Ադրբեջանի ձեռնարկած քայլերի մեջ պետք է որոշակի տրամաբանություն տեսնել: Դա այն է, որ երբ միջնորդները մատնանշում են «սատուս քվոյի պահպանման վտանգավորությունը», Ադրբեջանը դա հասկանում է որպես ակնարկ՝ դիմել քայլերի, որոնք «ավելի կամրապնդեն միջնորդների մտահոգությունը»: Եվ դա, ըստ ամենայնի, միայն «սեփական խաղ» չէ:

Այստեղից էլ՝ անպատժելիության հիմարությունը: Քանի որ Ադրբեջանի յուրաքանչյուր ոտնձգություն ոչ թե թուլացնում, ինչպես հավանաբար կարծում են միջնորդները, այլ ավելի է ամրապնդում ղարաբաղյան կողմի համոզմունքը, որ ԼՂՀ ու նրա ժողովրդի իրական անվտանգության միակ երաշխիքը ռազմաքաղաքական այն իրողությունն է, որ հաստատվել է 1994 թ. մայիսյան զինադադարով:

Այսինքն, եթե նման խնդիրն առհասարակ ունի ռազմական լուծում, ապա ինչո՞ւ չասել, որ այն արդեն իսկ լուծված է: Չէ՞ որ ղարաբաղյան կողմն անվտանգության փաստացի համակարգի այլընտրանքայնության հարց կարող է քննության ենթակա դիտարկել միայն մի դեպքում. երբ կլինեն պատերազմի վերսկսումը բացառող իրական շոշափելի երաշխիքներ: Դրանք չկան: Իսկ այդպիսիք ԼՂՀ-ին ապագայում տալու մասին միջնորդների «հավաստիացումների» գինն այն է, ինչ Ադրբեջանն անպատիժ անում է ամեն օր շփման գծում:

Զոհերի հանդեպ ափսոսանքի խոր զգացմամբ հանդերձ, գործնականում Ադրբեջանի ոտնձգությունները ԼՂՀ քաղաքական եւ զինվորական ղեկավարությանը, հասարակությանը նոր ոչինչ չեն հուշում: ԼՂՀ-ում միշտ էլ թերահավատ են եղել խնդրի խաղաղ կարգավորման մեջ Ադրբեջանի շահագրգռվածության հանդեպ: Տվյալ դեպքում խնդիր ունեն իրենք՝ միջնորդները: Քանի որ իրենք են փորձում հակառակը «հիմնավորել»: Եվ եթե Ադրբեջանի պատերազմական նկրտումները չեն բխում խնդրի լուծման մասին ԵԱՀԿ ՄԽ երկրների պատկերացումներից, մի բան, որ նրանք բազմիցս են վկայել գոնե հրապարակավ, ապա հարկ է սպասել, թե «այս աշխարհի ուժեղներն» ինչպե՞ս են հակադարձելու Ադրբեջանից իրենց նետած մարտահրավերներին: Եթե՝ շարունակվող լռությամբ կամ «կաղապարային» հայտարարությամբ, ապա երեւի հարկ կլինի արձանագրել, որ Իլհամ Ալիեւի «բարձր մարտականությունը» սնվում է ոչ միայն անձնական ամբիցիաներից:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

Կրասնոյարսկցի գործարարը Երեւանում ուզում է բարեկամության այգի եւ հուշարձան ստեղծել

Խմբագրություն այցելած «Ազգի» բարեկամներից մեկից՝ Սիմոն Ալավերդյանից մի հետաքրքրական նախաձեռնության մասին իմացանք: Ս. Ալավերդյանը Կրասնոյարսկում գործող «Ստիմեֆս խումբ» հոլդինգի հայաստանյան ներկայացուցիչն է: Հոլդինգի ղեկավար Վլադիմիր Վաքիլովը մոտ երեք տարի Հայաստան եւ Արցախ է այցելում, կապվել է մեր երկրի հետ: Վաքիլովը գործարար է, 7 տարի եղել է Կրասնոյարսկի մարզի փոխնահանգապետը, նրա ղեկավարած հոլդինգը զբաղվում է շինարարությամբ, հրատարակչական գործով եւ այլ բիզնեսներով, ներկայացուցչություններ ունի մի շարք երկներում, Կրասնոյարսկի հայ համայնքի բարեկամներից է: Հայաստանում նրա անձնական կապերն այժմ վերածում են տարբեր նախագծերի, բիզնես հետաքրքրությունների, որոնցից մեկն էլ Գյուլիստանի պայմանագրի 200-ամյակի առիթով պատմական հուշահամալիր-այգու ստեղծման նախագիծն է: Նախապես Վաքիլովն ուզում էր անպայման իրականություն դարձնել Ստեփանակերտում: Այդ միտքը ծագել էր Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ սրբազանի հետ զրույցների ընթացքում, քանի որ Գյուլիստանի պայմանագիրն ամրագրում էր նաեւ Լեռնային Ղարաբաղի ինքնակամ միավորումը Ռուսական կայսրության մեջ: Հետագայում՝ Հայաստան եւ Ղարաբաղ այցելությունների ընթացքում Վաքիլովը վերջնականապես կողմնորոշվեց եւ «Ժողովուրդների բարեկամության» այգի եւ «Դարերի բարեկամություն» մոնումենտալ կոմպոզիցիան տվյալ այգում որոշեց հիմնել հենց Երեւանում: Նախագիծն արդեն արված է, մոնումենտը բարձունքում տեղադրված զանգակատան կերպն է ունենալու՝ ռուս եւ հայ ճարտարապետության միախառնմամբ: Իսկ այգին պետք է լինի Երեւանի բարձրադիր թաղամասերից մեկում: «Ստիմեֆս» ընկերությունում արդեն մանրամասն պատրաստվել են այդ ծրագրի իրականացմանը՝ «Բարեկամության այգու» դեսալային պատկերն արդեն կա նաեւ ալբոմի տեսքով, իսկ «Դարավոր բարեկամություն» քանդակային կոմպոզիցիան ստեղծվում է ռուս հայտնի քանդակագործ Կոնստանտին Զինչիչի մասնակցությամբ՝ էլի ռուսական եւ հայկական խորհրդանիշների եւ պատմական անդրադարձների համադրմամբ:

«Ստիմեֆսի» ներկայացուցիչները 2010 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսներին երկու անգամ այցելեցին Երեւան՝ առավել մանրամասն ուսումնասիրելու նախագծի իրականացման փաստաթղթերը, քանդակների եւ հուշահամալիրի հնչողության տեղական առանձնահատկությունները եւ հանդիպելով Հայաստանի ղեկավարության հետ՝ նրանց ծանոթացրին նախագծի էսքիզներին: Մասնավորապես հանդիպում է եղել Երեւանի նախկին գլխավոր ճարտարապետ Սամվել Դանիելյանի հետ, անգամ քննարկվել է տարածքի որոնման խնդիրը: Հանդիպում է եղել նաեւ Գարեգին Երկրորդի, Պարգեւ սրբազանի, քաղաքապետ Կարեն Կարապետյանի հետ: Այս հունվարին Կրասնոյարսկում ստեղծվել է հուշահամալիրի կառուցումն ապահովող բարեգործական հիմնադրամ՝ «Հայաստան-2013», որի անդամ են «Ստիմեֆսի» ղեկավարների հետ նաեւ Կրասնոյարսկի եւ ընդհանրապես Սիբիրի հայ համայնքի ազդեցիկ հայերը:

«Ստիմեֆս խմբի» ղեկավար Վլադիմիր Վաքիլովը այս բոլորի մասին պատմող նամակ է ուղղել նաեւ Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանին՝ նրա անձնական աջակցությունն ակնկալելով ծրագրի իրականացման գործում, նշելով, որ ծրագիրը վայելում է ՌԴ ԱԳՆ-ի, Կրասնոյարսկի ղեկավարների, Կրասնոյարսկի քաղաքապետի աջակցությունը, եւ նախագծի իրականացումը, ինչպես նաեւ Երեւանի եւ Կրասնոյարսկի՝ քույր քաղաքներ դառնալու հանգամանքը հզոր ազդակ կարող են դառնալ տնտեսական եւ մշակութային հարաբերությունների զարգացման համար: Նախագծի համար 1,5 հա տարածք է պետք, Վաքիլովը կուզենար, որ այդ տարածքի տրամադրումը չուշանար, խոսքը կադաստրային արժեքով գնման մասին է, մինչդեռ դա ձգձգվում է: Ի դեպ, Կրասնոյարսկում մեծ հայկական համայնք կա, այնտեղ գաղափար կա փողոցներից մեկը կոչելու Ալեքսան Կիրակոսյանի անունով, սա էլ Ս. Ալավերդյանի գաղափարն է:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահություն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Այս տարվա հունվար-ապրիլին գներն աճել են 10,5 տոկոսով

Միայն ապրիլին արշանագրվել է 0,2 տոկոս գնանկում

Ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՎԾ) հրապարակել է 2011-ի առաջին 4 ամիսների գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում: Համաձայն հրապարակված ցուցանիշների, 2011-ի հունվար-ապրիլին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, գներն աճել են 10,5 տոկոսով: Այսինքն, բարձր գնաճային միջավայրը դեռ պահպանվում է: Միաժամանակ, 2010-ի դեկտեմբերի նկատմամբ, հունվար-մարտին արձանագրված 5,2 տոկոս գնաճին ապրիլին հաջորդել է 0,2 տոկոս գնանկումը: Դեռեւս հնարավոր չէ ասել, որ դա գնանկման նախանշան է: Կարելի է միայն ենթադրել, որ համեմատաբար հաջող գյուղատնտեսական տարվա շնորհիվ առաջիկա ամիսներին որոշակի գնանկում կարձանագրվի: Մյուս կողմից էլ ԿԲ-ի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքների բարձրացումը պետք է նպաստի գնանկմանը: Սակայն չմոռանանք, որ գնաճը սանձելու հետ մեկտեղ ԿԲ-ի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքների բարձրացումը նպաստում է նաեւ տնտեսական աճը սանձելուն: Այդ հաղթահարության ազդեցությունը արդեն իսկ երեւաց հունվար-մարս ամսվա տնտեսական աճի ցուցանիշի վրա, որը զրոյական էր: Ինչեւէ:

Պարենային ապրանքների (ներառյալ ծխախոտն ու խմիչքը) գները ապրիլին մարտի նկատմամբ նվազել են 0,5 տոկոսով, ոչ պարենային ապրանքների գներն աճել 0,5 տոկոսով, իսկ ծառայությունների գները մնացել են անփոփոխ: Այս տարվա ապրիլին 2010-ի ապրիլի համեմատ գները հետեւյալ կերպ են փոխվել՝ պարենային ապրանքներինը աճել են 15,9 տոկոսով, ոչ պարենային ապրանքներինը՝ 2,8 տոկոսով, ծառայություններինը՝ 2,3 տոկոսով: Առավել մանրամասն ներկայացնենք պարենային ապրանքների գների փոփոխությունները, որոնք առավել շատ են հետաքրքրում բնակչությանը:

Պարենային ապրանքներից բանջարեղենի եւ կարտոֆիլի գներն անցյալ տարվա ապրիլի նկատմամբ աճել են 28,3 տոկոսով, այս տարվա մարտի համեմատ՝ նվազել 5,3 տոկոսով: ԱՎԾ-ի կողմից նշվում է, որ ապրիլին մարտի նկատմամբ գնանկումը հիմնականում պայմանավորվել է պոմիդորի գների 15,7 տոկոս եւ վարունգի գների 20,2 տոկոս գնանկումով:

Մրգի գներն այս ապրիլին անցյալ տարվա ապրիլի նկատմամբ աճել են 30,7 տոկոսով, իսկ այս տարվա մարտի համեմատ՝ նվազել 1,8 տոկոսով: Նվազել են բանանի՝ 11,3 տոկոսով, խնձորի՝ 5,1 տոկոսով, տանձի՝ 4 տոկոսով, գները:

Ձկնամթերքի եւ ոչ ոգելից խմիչքների գները գրեթե անփոփոխ են մարս ամսվա համեմատ եւ փոքր-ինչ նվազել են անցյալ տարվա ապրիլի նկատմամբ՝ 0,2-0,1 տոկոսով: Շաքարավազի գներն այս ապրիլին անցյալ տարվա ապրիլի նկատմամբ աճել են 5,2 տոկոսով, իսկ այս տարվա մարտի համեմատ՝ 4,2 տոկոսով: Կենդանական եւ բուսական յուղերի գներն այս ապրիլին անցյալ տարվա ապրիլի նկատմամբ աճել են 16,9 տոկոսով, իսկ այս տարվա մարտի համեմատ՝ 3,4 տոկոսով:

Մսամթերքի գներն այս տարվա ապրիլին անցյալ տարվա ապրիլի նկատմամբ աճել են 8,8 տոկոսով, իսկ այս տարվա մարտի համեմատ՝ 0,1 տոկոսով: Հացամթերք ապրանքախմբում այս տարվա ապրիլին անցյալ տարվա ապրիլի նկատմամբ գներն աճել են 17,1 տոկոսով, իսկ այս տարվա մարտի համեմատ՝ 0,1 տոկոսով: 2011-ի ապրիլին ձվի գինը 2010-ի ապրիլի համեմատ աճել է 15,1 տոկոսով, իսկ այս տարվա մարտի համեմատ 0,3 տոկոսով:

Հարկ են՝ հաշվի առնել, որ գների ինդեքսն ԱՎԾ-ն որոշում է ուսումնասիրելով շուրջ 500 ապրանքների եւ ծառայությունների գները: Միաժամանակ, հարկ է նկատի ունենալ, խոսքը միջինացված գների ցուցանիշների մասին է:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Մամուլի ազատության ժամանակը» Էդիկ Բաղդասարյանին

Խոսքի ազատության համաշխարհային օրվան նվիրված 2011թ.՝ «Մամուլի ազատության ժամանակը» մրցանակը երեկ Ժուռնալիստների միությունում շնորհվեց «Հետք»-ի գլխավոր խմբագիր **Էդիկ Բաղդասարյանին**՝ հետաքննական լրագրության զարգացման, անկախ դիրքորոշման եւ խիզախության համար:

Մրցանակակրին ընտրել են Ժուռնալիստների միությունը, Երեւանի մամուլի ակումբը, «Ինտերնյուս» մամուլի աջակցության հասարակական կազմակերպությունն ու Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն:

«Մամուլը միշտ ազատ է ու պետք է օգտվել այդ ազատության հնարավորությունից: Ես միշտ ասում եմ՝ եթե լրագրողներն իրենց խմբագրություններում եւ հեռուստաընկերություններում պայքարեն խոսքի ազատության համար, այսօր մեր հեռուստաընկերությունների վիճակն այսպես չէր լինի: Պետք է ներսում պայքարել իրավունքների համար: Դուք էգոիստ եք (նկատի ունի հեռուստատեսության լրագրողներին-Հ.Հ.), հարվածը թողել եք դրսում, այդպես չի կարելի: Պետք է ազատության համար կրել հավասար պատասխանատվություն», ասաց Էդիկ Բաղդասարյանը՝ հավելելով, որ մի ֆանի օր առաջ զրուցել է «Երկիր մեդիա» հեռուստաընկերության լրագրողի հետ, որը դժգոհում էր, որ չի կարողանում ազատ ու անկաշկանդ ստեղծագործել:

Հ. Հ.

Ավտովթարից 9 վիրավոր

Մայիսի 1-ին Էջմիածին-Արմավիր մայրուղու վրա իրար են բախվել երկու մարդատար ավտոմեքենա: Վթարից մեքենաներում եղած 9 քաղաքացի ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ եւ տեղափոխվել Էջիմածնի հիվանդանոց: Ինչպես պարզվեց, վիրավոր ուղեւորների մեջ են եղել նաեւ ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ Սամվել Մուրադյանը իր տիկնոջ՝ Նելլիի հետ (նույնպես ԵՊՀ դասախոս): Վերջիններիս, ինչպես **«Ազգին»** պատմեց պրն Մուրադյանը, Էջմիածնի հիվանդանոցից տեղափոխել են Երեւանի Բժշկական համալսարանի թիվ 1 հիվանդանոց: Իսկ թե ինչպես տեղի ունեցավ դեպքը, պրն Մուրադյանն ասաց. «Մենք մեր մեքենայով հանգիստ գնում էինք եւ օրինական թույլատրելի տեղից շրջադարձ էինք կատարում, հենց այդ պահին մեծ արագությամբ մի «Ժիգուլի» ավտոմեքենա հարվածեց մեր մեքենային, ու երկու մեքենաներն էլ շրջվեցին: Մեր մեքենայում 5 հոգի էինք, մյուսում՝ 4: Բոլորիս վնասվածքներով տեղափոխեցին հիվանդանոց»:

«Ազգը» զրուցեց հիվանդանոցի վնասվածքաբանության եւ օրթոպեդիայի բաժնի բժիշկ-օրդինատոր **Արսակ Օհանյանի** հետ, որից տեղեկացավ, որ հիվանդներն ընդունվել են «գանգուղեղի փակ վնասվածք աղտոտումամբ, կոնքի ոսկրերի կոտրվածքով եւ աննշան տեղաշարժով: Սամվել Մուրադյանի մոտ անրակի կոտրվածք՝ առանց տեղաշարժի: Ներկայումս ամուսինների վիճակը հարաբերական հանգիստ է, հետազոտամիկան՝ կայուն: Երկուսի համար էլ ընտրվել է կոնսերվատիվ բուժման եղանակ: Վիճակը գնահատվում է կայուն բավարար: Երկուսն էլ մոտ 3 շաբաթ պետք է գտնվեն անկողնային ռեժիմում, որից հետո պարզ կլինի հետագա բուժման ընթացքը», ասաց ամուսիններին բուժող բժիշկը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

«Ազգ»-ը շուտով եւ կատարյալ ապաքինում է մաղթում բոլոր տուժածներին:

Մամուլը դեռ հասարակության ...

1-ին էջից

Նկատենք, որ այսօր մամուլի համար ավելի ու ավելի է դժվարանում գլխավոր խնդիրը՝ մամուլի ազատությունն ապահովելը, քանի որ ֆինանսական կախվածությունը նրան դարձնում է օրվա, հանգամանքների ու մարդկանց գերին, իսկ ֆինանսական խեղճության պարագայում մի փոքր դժվար է խոսել մամուլի ազատության մասին: Եթե լրագրողը կախված է նրանից, թե ինքն իր կամքով կհասնի՞ այս կամ այլ եղելության վայրը, կամ նրան այս կամ այն շահագրգիռ անձը կամ ուժը կտանի՞ այնտեղ, առհասարակ՝ կկարողանա՞ հասնել դեպքի վայր, սեփական միջոցները չափսոսալով, թե՞ միջնորդավորված լրատվություն կտա, այս բոլորից են կախված նրա լրատվության որակն ու ուղղվածությունը: Եթե լրագրողի ներկայացրած մամուլը այս կամ այն քաղաքական ուժի ֆինանսական ազդեցությունն է կրում, սա կրկնակի հանգամանք է լրատվության ուղղորդվածության առումով: Իսկ այն պարագայում, երբ հայաստանյան մամուլը լող է տալիս քաղաքական խմբերի միջեւ՝ թաքնված կամ ափաբկարա այս կամ այն քաղաքական խմբի շահը ներկայացնելով, այս դեպքում հաճախ մամուլի ազատության մասին վերամբարձ ճառերը, զանազան փորձերն ու գրանտային թեմատիկ ֆինարկումները հնչում են որպես կեղծավորություն ու փարիսեցիություն: Այն պարագայում, երբ հաճախ տարբեր պատվիրված հոդվածները որպես զենք քաղաքական խմբերը կամ զանազան շահառուներ թափահարում են միմյանց գլխին, երբ լրատվական ֆիլտրությունը դարձել է մասնագիտություն՝ միայն մեկ գերնպատակ՝ բիզնես-շահը հետապնդելով, ահա այս դեպքում խոսել մամուլի ազատության մասին պարզապես ծիծաղելի է: Գումարած այն, որ ինչպես մեր կյանքի բոլոր ոլորտներում, մամուլում եւս գործում են թայֆաբազությունը, դրամաշնորհային արտոնյալների վաղուց գծված շրջանակը, մրցանակ տվողների եւ ստացողների փոխշահավետ գոյակցությունը, ապա ազատության մասին խոսակցությունը ֆիկցիա է դառնում: Այս իմաստով երբ խոսում են ՁԼՄ-ների ոլորտի օրենսդրությունը բարեփոխելու մասին՝ կարելի է պարզապես ուսերը թոթվել, քանի որ վերը նշված մեղքերը կրողները հաճախ այդ մասին խոսողներն են: Օրենսդրությունը փոխելը՝ լավ, բայց օրենքների անկատարությո՞ւնն է խանգարում սեւ նալով պատվեր չկատարել, միայն շահադիտական նպատակով այս կամ խնդիրը հետապնդելուց հրաժարվել: Այնպես որ իդեալական օրենսդրություն ունենալու դեպքում էլ լրագրողի եւ լրատվամիջոցի ղեկավարի խիղճն ու մասնագիտական բարեխղճությունն առավել առաջնային են, քան որեւէ օրենք:

Առիթից օգտվեմ եւ մեկ այլ խոչընդոտի զուտ ներհայաստանյան խնդիր-ասուլիսային լրագրության մարտնչողականության մասին խոսեմ, որը փորձում է խժռել ամեն նախաձեռնողականություն եւ, կարելի է ասել, ձեռք է զարկել փչացնելու երիտասարդ լրագրողական սերնդին: Մամուլի ակումբները, զանազան քաղաքական շահեր ներկայացնելով՝ ամեն օր փորձում են կազմակերպել մեր քաղաքական, տնտեսական, հասարակական կյանքը, թելադրել խաղի կանոններ՝ ամեն օր նույն նեղ շրջանակի մարդկանց հրավիրելով ասուլիսի: Ամեն օր բոլոր հեռուստաընկերություններում ցուցադրվում են նույն մարդկանց մտքի գոհարները, կարծես մի փայտիկով մեկը չափ է տալիս՝ ոչ ոքի թույլ չտալով դուրս գալ ակումբների գծած շրջանակից: Ակումբները պատվերը ստանում են եւ մեր կյանքը գոնե լրատվության առումով կազմակերպում ինչ-որ խմբերի գծած ծրագրով՝ բթացնելով, թմրեցնելով եւ հիմարացնելով: Գոնե մամուլը փորձում է լիովին չտրվել այդ թմրեցմանը, եւ մամուլի լրագրողները գոնե փորձում են նախաձեռնություն դրսեւորել, իսկ մեր լրատվական կայքերի ու հեռուստաընկերությունների լրագրողները վազ են տալիս ասուլիսից ասուլիս, ակումբից ակումբ, մի բան այստեղից են փախցնում, մի բան այնտեղից, ու նրանց մեծ մասն այդպես էլ ակումբների պատճառով չի կարողանում լրագրող դառնալ ու զրկվում է նախաձեռնություն դրսեւորելու հնարավորությունից:

Մամուլի համար մեկ այլ խոչընդոտ է մեր պաշտոնյաների անհանդուրժողականությունը, թափանցիկ չափսաելու նորանոր միջոցների հորինումը, դե իսկ զրպարտանքի եւ վիրավորանքի ապաքրեականացումը ժամանակին չկարգավորվեց տուգանքի մի նվազագույն սիմվոլիկ շեմ ամրագրելով, ինչը թույլ է տալիս տեղից վեր կացողին ֆինանսական ապոկալիպսիսի ենթարկել մամուլը: Սակայն ընդհանուր առմամբ մխիթարականն է այն, որ մամուլի լրագրողների մեծ մասի ձայնը լսելի է, նրանցից շատերը, անկախ մրցանակների թայֆայական բաշխումից, ճանաչված եւ հարգված են, նրանց կարծիքը հաճախ է հաշվի առնվում, իսկ նրանց տեսակետներն ու բացահայտումներն իրենց ազդեցությունն են ունենում տարբեր գործընթացների վրա: Դրա ապացույցն ընթերցող ունենալն է, որի շնորհիվ, ի վերջո, մամուլը մի կերպ գլուխ է հանում դժվարին իրավիճակներից եւ իր վաճառքի գնով գոնե տպագրության ծախս ու պետության հարկ տալիս: Ընթերցողն է մեր իսկական գնահատողը, որի համար էլ իրականում աշխատում ենք, ով ամեն օր իր ցանկացած թերթի ցանկալի համարը գնելով կամ թերթի օնլայն տարբերակը բացելով՝ հույս է տալիս լրագրողին ու խմբագրին, որ թերթը դեռեւս հասարակության օրակարգի մասն է, նրա բարձրացրած խնդիրները արձագանք են գտնում: Դա ուժ է տալիս մամուլի լրագրողին, չնայած դժվարություններին, այդ թվում՝ ֆինանսական, ամեն օր նստել համակարգչի առաջ եւ գնալ թեմայի հետեւից:

Հ.Գ.- Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի տվյալներով, այս տարվա առաջին եռամսյակում 10 դատական նոր գործ է հարուցվել լրատվամիջոցների դեմ, որոնք ուղղակիորեն կապված են 2010 թվականի մայիսի 18-ին ընդունված՝ զրպարտության եւ վիրավորանքի ապաքրեականացմանը վերաբերող օրենսդրական փաթեթին: Օրենքով, զրպարտության դեպքում սահմանված պատժաչափը մինչեւ 2 մլն դրամ է, իսկ վիրավորանքի դեպքում՝ մինչեւ 1 մլն դրամ:

ԱԶԳ **Վկայություններ**

Արդի հայ թուրքագիտության վաստակաշատ երախտավորը

Պրոֆեսոր Ավետիս Փափազյանի ծննդյան 80-ամյակի առիթով

XX դարի երկրորդ կեսը նշանավորվեց Հայաստանում գիտության բուռն զարգացումով, երբ մեծ վերելք ապրեցին գիտության մինչ այդ ձեւավորված ուղղությունները՝ մի կողմից, եւ ձեւավորվեցին գիտական նոր ուղղություններ՝ մյուս կողմից: Վերջիններիս շարքում հատկապես պետք է նշել արեւելագիտությունը: Հայաստանի գիտությունների ակադեմիայի կազմում 1958թ. պատմության մեջ առաջին անգամ ձեւավորվեց ակադեմիական գիտական կենտրոն՝ արեւելագիտության սեկտորը, որը 1971թ. վերակազմավորվեց Արեւելագիտության ինստիտուտի: Հայ արեւելագիտության ուսումնասիրության գլխավոր ոլորտներ համարվեցին թուրքագիտությունը, արաբագիտությունը, իրանագիտությունը եւ հրդագիտությունը, որոնք հետագայում համալրվեցին նաեւ Հին եւ Քրիստոնյա Արեւելքի, ապա նաեւ արեւելլասիական ուսումնասիրություններով: Այսօր հայ արեւելագիտության ուսումնասիրությունների աշխարհագրական սահմանները ներառում են մի վիթխարի տարածք, որը ձգվում է Բոսֆորից մինչեւ Խաղաղ օվկիանոս:

Հայ թուրքագիտության բնականոն զարգացման համար անհրաժեշտ էր այն համալրել նոր, երիտասարդ թուրքագետներով, որոնց պահանջարկը շատ սուր էր զգացվում: Կենտրոնը համալրվեց մասնագիտական կրթություն ստացած, արեւմտյան եւ արեւելյան լեզուների տիրապետող, բանիմաց, պրոֆեսիոնալ կադրերով, որոնք այնուհետեւ իրենց ուսերի վրա վերցրին հայ թուրքագիտության զարգացման ամբողջ բեռը: Դրանց առաջին շարքում էր **Ավետիս Փափազյանը**:

Ավետիս Փափազյանը ծնվել է 1931թ. մայիսի 1-ին սիրիական Լաթաքիա քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա շարունակել Բեյրութում: 1946թ. Փափազյանների ընտանիքը ներգաղթում է հայրենիք եւ բնակություն հաստատում Երեւանում: Այստեղ Ավետիսը 1955թ. ընդունվում է Երեւանի պետական համալսարանի ռոմանա-գերմանական ֆակուլտետը, որը ավարտում է 1960թ. եւ հաջորդ տարի աշխատանքի անցնում Հայաստանի Գիտությունների ակադեմիայի արեւելագիտության ինստիտուտում՝ նախընտրելով թուրքագիտությունը:

Ապա նա ընդունվեց ասպիրանտուրա եւ գործուղվեց Խորհրդային Միության Գիտությունների ակադեմիայի արեւելագիտության ինստիտուտ, գիտական ղեկավար ունենալով մի այնպիսի առաջնակարգ եւ հռչակավոր մասնագետ-թուրքագետի, ինչպիսին դոկտոր Կ. Տվերիտինովան էր, դառնալով նրա սիրված եւ լավագույն աշակերտը: Հետագայում նա բազմաթիվ առիթներ է ունեցել հպարտանալու իր շնորհալի եւ գիտությանը նվիրված սանի հաջողություններով: Մոսկվայում, Արեւելագիտության ինստիտուտի գիտական խորհրդում Ա. Փափազյանը 1964թ. փայլուն կերպով պաշտպանում է «Քյաթիբ Չելեբիի «Ջիհան-նյուման» եւ «Ֆեզլեկեն» որպես Հայաստանի պատմության աղբյուր (XVIդ.)» իր ատենախոսությունը, եւ նրան շնորհվում է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Նա դառնում է միջնադարյան Հայաստանի պատմության եւ աղբյուրագիտության աչքի ընկնող մասնագետ եւ մեծ հռչակ ձեռք բերում գիտական շրջանակներում: Ա. Փափազյանը գիտական մեծ առաջընթաց է արձանագրում, եւ նրան վստահվում է ՀՀ գիտությունների ակադեմիայի աղբյուրագիտության բաժնի պատասխանատու պաշտոնը, որը նա ղեկավարում է 1988-1992թթ.: Այդ տարիները շատ բեղմնավոր են եղել թե իր եւ թե բաժնի համար ընդհանրապես: Դրան մեծապես նպաստել է նրա բազում լեզուների հիանալի իմացությունը, այդ թվում՝ հայերենի, ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի, թուրքերենի, եւ, որ շատ կարեւոր է, օսմաներենի կամ արաբատառ թուրքերենի: Նա օսմաներենի լավագույն գիտակն էր մեր հանրապետությունում: Լեզուների իմացության շնորհիվ նրան մատչելի են դառնում թուրքերեն եւ այլ լեզուներով արխիվային նյութերը, պաշտոնական փաստաթղթերը եւ տարբեր երկրների ականավոր թուրքագետների աշխատությունները, որոնք վերաբերում էին Օսմանյան կայսրության, Հայաստանի եւ հայության պատմությանը:

Ա. Փափազյանը հեղինակ է մեկ տասնյակից ավելի մենագրական ուսումնասիրությունների, որոնք հրատարակվել են հայերեն, ռուսերեն, անգլերեն, արաբերեն եւ թուրքերեն լեզուներով: Դրանք ինքնատիպ հետազոտություններ են եւ ծանրակշիռ ներդրում հայ արեւելագիտության բնագավառում, առանց որոնց անհնար է պատկերացնել արդի հայ թուրքագիտությունը:

Սակայն դրանց մեջ իր կարեւորությամբ եւ եզակիությամբ առանձնանում է «Հայերի ցեղասպանությունն ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի» մեծածավալ ուսումնասիրությունը, որը լույս տեսավ 1989թ. եւ ուղղակի սենսացիա առաջացրեց ոչ միայն գիտական, այլեւ քաղաքական ու հասարակական շրջանակներում: Դրա մեջ երիտթուրքական ղեկավարության դատավարության պաշտոնական նյութերն ու նիստերի արձանագրություններն էին: Դատավարությունը տեղի է ունեցել 1919-1920թթ., Կոստանդնուպոլսում, եւ իրականացրել են օսմանյան վերջին սուլթան Մեհմեդ Վահիդդին 6-րդի հրավարակով հիմնված ռազմական արտակարգ ատյանները՝ դատելու երիտթուրքական կուսակցության ղեկավարությանը, կառավարության նախարարներին, հոգեւոր առաջնորդներին եւ այլ ղեկավար գործիչների, որոնք մեղադրվում էին Օսմանյան կայսրությունը Առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներգրավելու եւ հայության նկատմամբ 1915թ. կիրառված այն հանցանքի համար, որը հետագայում կոչվեց ցեղասպանություն: Օսմանյան դատարանը մահվան դատապարտեց երիտթուրքական առավել աչքի ընկնող առաջնորդներին՝ Թալեաթին, Էնվերին, Ջեմալին, Շաֆիր Բեհաէդդինին, Նազըմին եւ այլոց, իսկ շատ-շատերի էլ՝ բանտարկության, ապացուցված համարելով նրանց հանցանքը կայսրության հայության դեմ: Դա փաստորեն նշանակում էր Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչում եւ դատապարտում՝ թուրքական պաշտոնական իշխանությունների կողմից: Հետեւաբար, պատմագիտության, այդ թվում եւ հայ պատմագիտության կողմից անբացատրելի, եթե ոչ աններելի բացթողում պետք է համարել այն պարագան, որ անտեսելով թուրքական վեհապետի հրամանով իրականացված թուրքական օրինական դատարանի օրինական որոշումը, նշվում է, իբր, թե Թուրքիան մինչ օրս չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Այդ տեսակետը հնացած է եւ այլեւս չի համապատասխանում իրականությանն ու արժանի է վերանայման եւ անպայման պետք է վերանայվի, քանի որ, ինչպես վկայում է սուլթանական դատարանի վերոնշյալ որոշումը, թուրքական իշխանություններն արդեն մեկ անգամ ճանաչել են Հայոց ցեղասպանությունը:

Ա. Փափազյանի այդ աշխատությունը հրատարակվեց 80 հազար տպաքանակով, ինչը մեծ թիվ էր լաստիական ուսումնասիրություններով: Այսօր հայ արեւելագիտության ուսումնասիրությունների աշխարհագրական սահմանները ներառում են մի վիթխարի տարածք, որը ձգվում է Բոսֆորից մինչեւ Խաղաղ օվկիանոս:

Հայ թուրքագիտության բնականոն զարգացման համար անհրաժեշտ էր այն համալրել նոր, երիտասարդ թուրքագետներով, որոնց պահանջարկը շատ սուր էր զգացվում: Կենտրոնը համալրվեց մասնագիտական կրթություն ստացած, արեւմտյան եւ արեւելյան լեզուների տիրապետող, բանիմաց, պրոֆեսիոնալ կադրերով, որոնք այնուհետեւ իրենց ուսերի վրա վերցրին հայ թուրքագիտության զարգացման ամբողջ բեռը: Դրանց առաջին շարքում էր **Ավետիս Փափազյանը**:

Ավետիս Փափազյանը ծնվել է 1931թ. մայիսի 1-ին սիրիական Լաթաքիա քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա շարունակել Բեյրութում: 1946թ. Փափազյանների ընտանիքը ներգաղթում է հայրենիք եւ բնակություն հաստատում Երեւանում: Այստեղ Ավետիսը 1955թ. ընդունվում է Երեւանի պետական համալսարանի ռոմանա-գերմանական ֆակուլտետը, որը ավարտում է 1960թ. եւ հաջորդ տարի աշխատանքի անցնում Հայաստանի Գիտությունների ակադեմիայի արեւելագիտության ինստիտուտում՝ նախընտրելով թուրքագիտությունը:

Ապա նա ընդունվեց ասպիրանտուրա եւ գործուղվեց Խորհրդային Միության Գիտությունների ակադեմիայի արեւելագիտության ինստիտուտ, գիտական ղեկավար ունենալով մի այնպիսի առաջնակարգ եւ հռչակավոր մասնագետ-թուրքագետի, ինչպիսին դոկտոր Կ. Տվերիտինովան էր, դառնալով նրա սիրված եւ լավագույն աշակերտը: Հետագայում նա բազմաթիվ առիթներ է ունեցել հպարտանալու իր շնորհալի եւ գիտությանը նվիրված սանի հաջողություններով: Մոսկվայում, Արեւելագիտության ինստիտուտի գիտական խորհրդում Ա. Փափազյանը 1964թ. փայլուն կերպով պաշտպանում է «Քյաթիբ Չելեբիի «Ջիհան-նյուման» եւ «Ֆեզլեկեն» որպես Հայաստանի պատմության աղբյուր (XVIդ.)» իր ատենախոսությունը, եւ նրան շնորհվում է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Նա դառնում է միջնադարյան Հայաստանի համար, եւ անմիջապես սպառվեց: 2005 թ. ունեցավ իր երկրորդ հրատարակությունը Լոս Անջելեսում՝ «Պատմական նշանակություն ունեցող դատավարություն, որի վճիռներն անբեկանելի են» խորագիրը կրող մեր առաջաբանով:

Պրոֆեսորը գիտական աշխատանքների հետ զբաղվել է նաեւ դասախոսական աշխատանքով: Նա Թուրքիայի պատմություն է դասավանդել եւ օսմաներեն է սովորեցրել Երեւանի պետական համալսարանում:

1993թ. նա տեղափոխվեց ԱՄՆ եւ բնակություն հաստատեց Լոս Անջելեսում: Ի տարբերություն շատ-շատերի, նա հավատարիմ մնաց մտավորականի իր կոչմանը եւ գիտական նախաձեռնությանը եւ ընթերցողի սեղանին դրեց մի քանի մենագրական ուսումնասիրություններ, որոնք մեզ, որպես այդ ինստիտուտի տնօրեն, հրատարակեցինք Երեւանում՝ «Արեւելագիտության ինստիտուտի» մակնիշով: Դրանցից կցանկանայինք առանձնացնել նրա «Թուրքական վավերագրական նյութերը Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915թթ.)», «Ցեղասպանություն եւ գոյատեւման պայքարը», «Հայերի ցեղասպանությունը թուրք քաղաքական գործիչների հուշագրություններում», «Հավատի վկայություններ Հայոց ցեղասպանության մասին» եւ այլ արժեքավոր, փաստակրկված եւ վերլուծական բնույթի ուսումնասիրությունները:

Հետադարձ հայացք նետելով իր անցած գիտական ուղուն՝ պրոֆեսոր Ավետիս Փափազյանը իրավամբ կարող է հպարտանալ, որ կանգնած է եղել արդի հայ թուրքագիտության ձեւավորման ակունքների մոտ եւ ծանրակշիռ ու արժեքավոր ներդրում ունեցել նրա զարգացման գործում:

Ի խորոց սրտի շնորհավորում ենք մեր հարգարժան գործընկերոջը, վաստակաշատ գիտնականին, հայ արդի թուրքագիտության մեծ երախտավորին նրա ծննդյան 80-ամյակի առիթով, ցանկանում նրան շուտափույթ ապաքինում ու վերադարձ իր առօրյա «գիտական հոգսերին»:

Չմոռանաս, սիրելի գործընկեր, որ այնքան էլ հեռու չէ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը եւ իրավունք չունես այն դատարկ ձեռքերով դիմավորելու:

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՅՈՒ ՅՈՐՔ

Անհերքելին հերքելը նույնպես հանցագործություն է

Ապրիլի 24-ի եւ Սուրբ Հարության տոնի համընկման պատճառով Նյու Յորքում Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցի ոգեկոչումը որոշվեց անցկացնել հաջորդ կիրակի՝ մայիսի 1-ին: Աշխարհի հեղինակավոր այս ամբիոնում ամերիկահայերը հավաքի իրավունք են նվաճել տասնամյակներ առաջ շնորհիվ Հայոց ցեղասպանության ճանաչման ուխտին նվիրված Վարդանանց ասպետներ միության ջանքերի: Այս տարի ԱՄՆ Արեւելյան ափի բոլոր նահանգներից ժամանած հազարավոր հայերին միացել էին Նյու Յորքի հրեական համայքի ներկայացուցիչներ՝ համատեղ հիշատակելով հայոց Մեծ Եղեռնի եւ հրեական Ողջակիզման զոհերի հիշատակը: Ոգեկոչման միջոցառման կարգախոսն էր՝ ԹՈՒՐՔԻԱՆ ՄԵՂԱՎՈՐ Է ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ, ՀԵՐՔԵԼ ԱՆՀԵՐՔԵԼԻՆ՝ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ է: Թայմ սկվեր էին եկել Նյու Յորքի Հայոց տանն ապրող ցեղասպանության արդեն երեք վկաներ՝ Նիկդայում ծնված Շառլոս Քեշիշյանը՝ 99 տարեկան, Շապին Գարահիսարում ծնված Արշալույս Դադիրը՝ 98 տարեկան, եւ Բալույում ծնված Փերուզ Գալուստյանը՝ 101 տարեկան:

Ինչպես միշտ, Մեծ Եղեռնի զոհերի ոգեկոչման հավաքին մասնակցում էին ԱՄՆ ազդեցիկ սենատորներ եւ կոնգրեսականներ Չաք Շումերը, Ֆրենկ Փալոնը, Ռոբերտ Մենենդեսն ու Էնտոնի Վիները, որոնք կամք արտահայտեցին՝ շարունակել պայքարն այնքան ժամանակ, մինչեւ ԱՄՆ-ը պաշտոնապես ճանաչի Հայոց ցեղասպանության փաստը:

Կոնգրեսական Ֆրենկ Փալոնը նշեց, որ հայերը պետք է համարձակորեն հակազդեն անընդհատ ահագնացող թուրքական ժխտմանը: Թուրք-ադրբեջանական որեւէ կեղծիք եւ ժխտում անպատասխան չպետք է մնա, հակառակ դեպքում այս տանդեմը դառնում է ավելի ագրեսիվ:

Հավաքի բանախոս, պատմաբան Դենիս Փափազյանն իր խոսքում, դիմելով ԱՄՆ նախագահին, իրեն հատուկ սրամտությամբ նշեց. «Միստեր պրեզիդենտ սպիկ ինգլիշ», նկատի ունենալով՝ Բարաք Օբամայի ապրիլ-24-յան խոսքում հայերենով արտասանվող «Մեծ Եղեռն»-ի անգլերեն տարբերակը:

Հրեական Ողջակիզման վերապրողի դուստր, հասարակական գործիչ, Հոլոքոսթի կրթության եւ քաղաքացիական իրավունքի պաշտպան՝ Ջոան Ռիվիզն իր ելույթում զուգահեռներ անցկացրեց 20-րդ դարում մարդկության դեմ երբեւէ իրագործված երկու ծանրագույն հանցագործությունների՝ Մեծ Եղեռնի եւ Հոլոքոսթի, դրանց պատճառահետեւանքային կապի, երիտթուրքերի պարագլուխների եւ Հիտլերի միջեւ: Նա խիստ կարեւորեց այսօր երիտասարդ սերնդի դերը Հայոց ցեղասպանության ճանաչման պայքարի գործում:

Հիշատակի միջոցառմանը հատուկ մրցանակներ շնորհվեցին այս թեմայով լավագույն շարադրություններ գրած մի քանի ուսանողների: Հայտնի պատմաբան, Կալիֆորնիայի համալսարանի հայոց արդի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը դիմեց ներկաներին հետեւյալ կոչով. «Ժամանակը, ցավոք, երբեք հաշտ չի եղել հիշողության հետ: Կարեւոր է պահպանել եւ սերնդեսերունդ փոխանցել հայ դատի մասին հիշողությունը: Հիշողություն ընդդեմ մոռացության: Հիշողությունն է առաջնորդելու մեզ հաղթանակի»:

Հիշատակի հավաքին մասնակցում էին նաեւ ամերիկահայ հոգեւոր այրեր, համայնքի մշակութային, կրթության, կուսակցական եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հ. Գ. - Որպես լրագրող տասը տարի լուսաբանում եմ Թայմ սկվերում կազմակերպվող հավաքները: Տավով պետք է նշեմ, որ ամեն տարի պահպանվում են նույն ընթացակարգն ու ոճը, հնչող ելույթների տեքստերն արդեն անգիր են հիշվում: Մտավախություն կա, որ այս միօրինակությունը հիասթափության կարող է հանգեցնել: Ասածիս համակարծիք էին հավաքին ներկա շատ մասնակիցներ, որոնց հետ հաստատեցի զրուցել: Վաղուց անհրաժեշտություն կա այս կարգի միջոցառմանը դրսեւորել պրոֆեսիոնալ մոտեցում: Փոխել հին, վաղուց կարծրացած արտահայտչամիջոցները: Ժամանակակից բարձր տեխնոլոգիաների այս դարում պետք է լայն էկրանով ցուցադրել Հայոց եղեռնը լուսաբանող տեսաժապավեններ, ներկայացնել ցեղասպանության ճանաչմանը նպաստած անձանց, կազմակերպությունների, երկրների մասին նյութեր, ներգրավել աջակից այլազգի ուժերի: Այս գործի համար անհրաժեշտ ֆինանսական խնդիրը թերեւս կարելի է «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա դրամահավաքի օրինակով կազմակերպել:

ՍԱՌԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Նյու Յորք, Թայմ սկվեր

Պերճ Թերզյանին շնորհվել է «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» մեդալ

Կահիրեի Սբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում կիրակի օրը՝ ապրիլի 24-ին սուրբ Զատիկի պատարագի ընթացքում ձեռամբ եգիպտահայ թեմի առաջնորդ Տ Աշոտ եպիսկոպոս Մնացականյանի «Սբ Սահակ-Սբ Մեսրոպ» մեդալ է շնորհվել Կահիրեի ՀԲԸՄ-ի Եգիպտոսի շրջանակային հանձնաժողովի ատենապետ եւ ՀԲԸՄ Կահիրեի մասնաճյուղի պատվո ատենապետ Պերճ Թերզյանին:

Թերզյանն այդ մեդալին եւ կաթողիկոսական կոնդակին արժանացել էր դեռ 2010 թվականի հոկտեմբերին: Նա 1964-ից անդամ է ՀԲԸՄ-ին եւ Եգիպտոսի շրջանակային հանձնաժողովում զանազան պաշտոններ վարելուց հետո 1988-ից դարձել է նրա ատենապետը, իսկ 1992-ից 2002-ը՝ ձեռնհասությամբ վարել է ՀԲԸՄ-ի Կահիրեի մասնաճյուղի ատենապետությունը: 1975-1992 թվականներին եղել է անդամ Կահիրեի թեմական եւ քաղաքական ժողովների, իսկ 2003-06 թվականներին՝ ատենապետ քաղաքական ժողովի:

1999-ին ստացել է Մատենադարանի հատուկ վկայագիրը եւ Մեսրոպ Մաշտոցի հուշամեդալը՝ գիտահետազոտական աշխատանքներին սատարելու համար: 2007-ին ստացել է նաեւ ՀՀ նախագահական շնորհակալագիր՝ Կահիրեում ՀՀ դեսպանատանը սատար կանգնելու համար: Թերզյանը մեծ ներդրում ունի արաբերեն լեզվով «Արեւ» եւ այժմ «Արեգ» պարբերականների հիմնադրման գործում: Նա մշտական հոդվածագիրներից է եւ պարբերականի հայկական թեմայով հոդվածների գլխավոր խորհրդատուն:

Շնորհավորում ենք:

Հ. Ծ.

Բրայզան «հասկացրեց» Բաֆվին

Ինչպես տեղեկացնում է ադրբեջանական 1news.az կայքը, երեկ հարեւան երկրի Իսմայիլյան շրջանում՝ Ընտանիքի եւ երեխայի պետական կոմիտեի կազմակերպած հանդիպման ժամանակ Բաֆվում ԱՄՆ դեսպան Մեթյու Բրայզան ասել է. «Ադրբեջանի ղեկավարությունը հասկացավ, որ Ադրբեջանը ուժեղ եւ անկախ կլինի, կկարողանա ապահովվել իր աղագան, եթե լավ հարաբերություններ զարգացնի ԱՄՆ-ի եւ եվրոպական երկրների հետ»: Փաստորեն, ստացվում է, Ադրբեջանի ղեկավարությունը մինչ այդ «չէր հասկացել ԱՄՆ-ի եւ Եվրոպայի հետ հարաբերվելու կարեւորությունը»: Հիշեցնենք, վերջին օրերին Ադրբեջան-ԱՄՆ հարաբերությունները բավական հակասական էին. Բաֆուն միակողմանի չեղյալ հայտարարեց ԱՄՆ-ի հետ նախատեսված համատեղ զորավարժությունները:

Նախագահ Ալիեւը, ինչպես նաեւ Միլի մեջլիսի որոշ պատգամավորներ «Օսար ուժերին մեղադրեցին Ադրբեջանում իրավիճակն ապակայունացնելու մեջ»: Սրանից անմիջապես հետո Բրայզան մեկնեց Նախիջեւան, «բարձրաձայն հետաքրքրվեց» հայկական խաչքարերով, այնուհետեւ բարձրաձայնեց նաեւ փաստը, որ «տեղական իշխանությունները մերժել են իրեն»: Այս ամենից հետո Բաֆվում ԱՄՆ դեսպանը Հարավային Կովկասում ամերիկյան դեսպանների հանդիպում նշանակեց Թբիլիսիում: Նույն օրերին տարածաշրջանում էր գտնվում ԱՄՆ պետքարտուղարի օգնական Թինա Քեյդենաուն, իսկ Բաֆու ժամանեցին ամերիկացի 6 կոնգրեսականներ: Երեւանում ԱՄՆ դեսպանատնից հաղորդեցին, որ դեսպան Յովանովիչը Թբիլիսի չի մեկնի, իսկ Երեւանում ԱՄՆ դեսպանատունը Թբիլիսիում կներկայացնի փոխդեսպան Բրյուս Դայնահաուն: Մինչդեռ երեկ ադրբեջանական Vesti.az-ը, հղում անելով ANS TV-ին, տեղեկացրեց, որ «Թբիլիսիում տեղի է ունեցել Հարավային Կովկասում ԱՄՆ դեսպանների հանդիպում»:

Այս կապակցությամբ Բրայզան ադրբեջանական հեռուստաալիքին ասել է. «Մենք՝ դեսպաններով, պարբերաբար հանդիպում ենք, տարածաշրջանային զարգացումների նկատմամբ ունեցած դիրքորոշումները հստակեցնում: Ես չեմ կարող ամեն օր հետաքրքրվել ինչպես Երեւանում եղած ԱՄՆ դեսպանի, այնպես էլ Թբիլիսիի մեր գործընկերոջ աշխատանքով, այսպիսով առաջանում է աշխատանքը կոորդինացնելու անհրաժեշտություն»: Բրայզան, կրկին անդրադառնալով Ադրբեջանի հետ համատեղ չկայացած զորավարժություններին, ընդգծել է. «Կարեւոր չէ զորավարժությունների անցկացումը, կամ թե երբ կանցկացվի: Շատ ավելի կարեւոր է, որ մենք շարունակենք մեր գործակցությունը այս եւ այլ ոլորտներում: Օրինակ՝ նավթագազային ոլորտում»:

Այս հայտարարությունից հետո արդեն Բրայզան, ինչպես վերը նշեցինք, Իսմայիլյան շրջանում հանդես եկավ «Ադրբեջանի իշխանությունը հասկացել է...» հայտարարությամբ: Արդյո՞ք Բաֆվին «հասկանալ» հորդորել կամ միգուցե «սիրել են» Թբիլիսիում ԱՄՆ դեսպանների հավաքն ու այնտեղ քննարկված թեմաներն ու անհանգստությունները: Եվ, մի՞թե պատահական էր, հենց այն օրերին, երբ Թբիլիսիում ընթանում էր «ամերիկյան հավաքը», քաղաքագետ Հեյդար Ջամալի հայտարարությունը, թե Ադրբեջանում Արեւմուտքը հեղափոխություն է նախապատրաստում եւ դրա համար պետք է օգտագործվի ԱՄՆ դաշնակից Վրաստանի տարածքը»: Այս հարցերին դժվար է միանշանակ պատասխանել, փոխարենը ակնհայտ է, որ այս ամենից Բաֆուն իրոք կարող է շատ «բաներ հասկացած լինի»:

Հ. ԱՓՅԱՆ

Հովհաննես-Պողոս Բ պապը դասվել է երանելիների շարքին

Հանգուցյալ Հովհաննես-Պողոս Բ պապը մայիսի 1-ին եւ 2-ին հատուկ ծեսերով պաշտոնապես հռչակվել է Հռոմի կաթոլիկ եկեղեցու երանելի, այսինքն՝ սրբացման առաջին փուլում է: Այդ մասին հայտարարել է ներկայիս պապ Բենեդիկտոս 16-րդը, որի առաջնորդությամբ Սուրբ Պետրոսի հրապարակում կատարվում էր հանդիսավոր ժամերգությունը:

Հրապարակում եւ շրջակա փողոցներում հավաքվել էին համայն աշխարհից եկած մեկ միլիոնից ավելի ուխտավորներ: Պապական գահի մոտ էին 87 պաշտոնական պատվիրակություններ, ներկա էին Լեհաստանի եւ Իտալիայի նախագահները, վարչապետներ, միջազգային կազմակերպությունների ղեկավարներ: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ լույս մայիսի 1-ի գիշերը հին հռոմեական «Ջիրկո Մասսիմո» ձիարշավարանի դաշտում տեղի էր ունեցել պատարագ 200 հազար հավատացյալների (մեծ մասամբ երիտասարդներ) մասնակցությամբ:

Արարողություններն ավարտվել են մայիսի 2-ին գոհաբանական պատարագով՝ ձեռամբ Վատիկանի պետքարտուղար (վարչապետ), կարդինալ Տարչիզիո Բերտոնեի:

Դրանից հետո Հովհաննես-Պողոս Բ-ի (Կարոլ Վոյտիլա) մարմինն ամփոփող դագաղը փոխադրվել է տաճարի Սուրբ Սեբաստիան ժամատան հատուկ որմնախորշ, որի կողքին Միքելանջելոյի «Պիետա» քանդակն է:

Հովհաննես-Պողոս Բ-ի սրբացման գործընթացը հնարավոր դարձավ այն հրաշագործությունից հետո, որի շնորհիվ բուժվեց Պարկինսոնի հիվանդությամբ տառապած ֆրանսիացի միանձնուհի Իոհաննան:

«Ֆուկուշիմա-1»-ի 1-ին ռեակտորում կտեղադրվի օդափոխման նոր համակարգ

Ճապոնական «Ֆուկուշիմա-1» վթարված ԱԷԿ-ի 1-ին ռեակտորում օդափոխման նոր համակարգ կտեղադրվի օդը ռադիոակտիվ մասնիկներից մաքրելու նպատակով: Այդ մասին երեկ հայտարարել է ԱԷԿ-ի օպերատոր TEPCO ընկերությունը:

Մաքուր օդի պայմաններում աշխատակայանի աշխատակիցները կկարողանան վերադառնալ ներքին հարկաբաժիններ, նշում է Կիոդո գործակալությունը: Ճառագայթման մակարդակի իջեցումը թույլ կտա տեղում վերահսկել էներգաբլոկի հովացման համակարգի աշխատանքը եւ ազոտ ներմղել ռեակտորի արտաքին պատյանի տակ, որպեսզի կանխվեն ջրածնի պայթյունները:

«Ֆուկուշիմա-1»-ում նաեւ իրականացվում է ռադիոակտիվ ջրի արտամղում աստիճանաբար հարկաբաժիններից եւ ցամաքեցման համակարգից: Դա անհրաժեշտ է ԱԷԿ-ում նորոգման աշխատանքներ շարունակելու եւ 1-ին, 2-րդ, 3-րդ էներգաբլոկների ճնշման ներքին խցիկների մեջ ջուր լցնելու համար: Ռադիոակտիվությամբ վարակված ջրի արտամղումն անհրաժեշտ է նաեւ տեղանքի ռադիոակտիվ վարակումը նվազեցնելու համար:

ԳԻՏԱՐԿՈՒՄ

Արտառոց չէ՞

Մայիսի 2-ին Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարության խոսնակ Արիֆ Բաբաեւը հանդես է եկել հայտարարությամբ եւ ասել, որ «ԱԱՆ-ը գործուն պայքարում է պետականության հիմքերի հանդեպ ամենատարբեր սպառնալիքների, այդ թվում՝ ահաբեկչության դեմ: Դրա համար անցկացվում են անհրաժեշտ օպերատիվ միջոցառումներ, ԱԱՆ աշխատակիցները ջանքեր են գործադրում՝ պաշտպանելու Ադրբեջանի շահերը, պետության եւ քաղաքացիների անվտանգությունը»:

Սույն հայտարարությունը տարածող՝ գրեթե պաշտոնական լրատվամիջոցի համարում ունեցող 1news.az-ն արել է մի ուշագրավ հավելում. «Հիշեցնենք, որ մայիսի 2-ին, Պակիստանում, Իսլամաբադից ոչ հեռու առանձնատանն սպանվել է Ուսամա բեն Լադենը»:

Պատահակա՞ն է այս հեշտությունը: Լրագրողական ինքնագործունեությո՞ւն: Հազիվ թե: Այն ավելի շուտ թողնում է ԱԱ նախարարության խոսնակի ասածի մեկնաբանություն: Այսինքն, լրատվամիջոցը բացատրում է, թե ինչ առիթով է հայտարարություն տարածել ազգային անվտանգության ծառայությունը: Եվ դա ամերիկացի զինվորների կողմից Ուսամա բեն Լադենի սպանությունն է, որից հետո, ենթադրվում է, ադրբեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցները «ջանքեր են գործադրում՝ պաշտպանելու Ադրբեջանի շահերը, պետության եւ քաղաքացիների անվտանգությունը»:

Իսկ ինչու՞ պիտի թիվ մեկ ահաբեկչի սպանությունը «վտանգի Ադրբեջանի շահերը», որպեսզի այն կանխելու համար էլ հատուկ ծառայությունները «ջանքեր գործադրեն», ինչից կարելի է հասկանալ, որ հարեւան հանրապետությունում պարզապես «հակաահաբեկչական գործողություն» է իրականացվում:

Ըստ էության, Ադրբեջանի ԱԱՆ-ը խոստովանում է, որ Ուսամա բեն Լադենի սպանությունից հետո կա «ահաբեկչության թիրախ դառնալու սպառնալիք»: Իսկ դա կարող է բխել «Ալ Ղաիդայից» կամ որեւէ այլ՝ արմատական իսլամականության ջատագով կազմակերպությունից: Փաստորեն Ադրբեջանն զգուշացած է «հավանական վերժխնդրությունից»:

Ամենահետաքրքրականը թերեւս դա է: Ինչո՞ւ: Ուշագրավ է, որ ԱԱ նախարարության խոսնակը չի ասում, որ ամեն ինչ արվում է, որպեսզի «պաշտպանված լինեն օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունները»: Նա հստակ ասում է, որ գործադրվող ջանքերն ուղղված են «Ադրբեջանի շահերի, պետության եւ քաղաքացիների անվտանգության» պահպանմանը:

Ուստի կարելի է ասել, որ Ադրբեջանի հատուկ ծառայությունների խոսնակն ինչ-որ կերպ ակնարկում է իր երկրում «Ալ Ղաիդայի» կամ այլ ահաբեկչական կազմակերպության ներկայացվածությունը: Կամ էլ հասկացնում է, որ Ադրբեջանն «ինչ-որ կերպ ներգրավված է Ուսամա բեն Լադենի ոչնչացման գործողությանը, ինչի դիմաց էլ իսլամ ծայրահեղականները կարող են վրեժխնդրության դիմել»:

Այսպես թե այլ կերպ՝ Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարությունն Ուսամա բեն Լադենի սպանության լուրը Պակիստանի կողմից եւս հաստատվելուն զուգահեռ հանդես է եկել բազմանշանակ հայտարարությամբ: Եվ դա առնվազն արտառոց է:

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԱՄՆ-ը գնծում է, բայց «Բեն Լադենի սպանությունը դեռ հաղթանակ չէ»

1-ին էջից

Պակիստանի մայրաքաղաք Իսլամաբադից ոչ հեռու գտնվող Աբբոթաբադ քաղաքի իր թաքստոցում դիմադրություն ցուցաբերելուց հետո սպանված բեն Լադենի մահը, սակայն, ըստ Օբամայի, վերջ չի նշանակում, այն պատճառով, որ որեւէ կասկած չկա, որ «Ալ Ղաիդա»-ն կշարունակի ԱՄՆ-ի դեմ ուղղված հարձակումները:

Ընդ որում, Օբամայի խոսքերով, «ԱՄՆ-ը չէ ու երբեք էլ չի լինի իսլամի հետ պատերազմում: Բեն Լադենը մուսուլմանական առաջնորդ չէր, նա մուսուլմանների մարդասպան էր»: Պակիստանի հետ համագործակցությամբ իրականացված այդ գործողությունն ու Բեն Լադենի սպանությունը Օբաման «պատմական» որակեց, ընդ որում, որպես գործողության հիմնական դերակատարներ ներկայացնելով ամերիկյան հատուկջոկատայիններին, մինչդեռ Պակիստանից հնչող գնահատականների համաձայն՝ բեն Լադենի սպանությունը «պակիստանյան հատուկ ծառայությունների աշխատանքի արդյունքն է» :

Ամերիկյան հեռուստաթերթում բազմաթիվ փորձագետներ, մասնագետներ ներկայացնում էին այն ամենը, ինչ արդեն իսկ հայտնի էր Ուսամա բեն Լադենի մասին, հիշեցնելով, որ նրա պարագայում ԱՄՆ-ը գլխագին էր նշանակել 50 մլն դոլար: CNN-ի ազգային անվտանգության հարցերով վերլուծաբան Պետեր Բերգենը տասնչորս տարի առաջ հարցազրույց է վերցրել Օսամա Բեն Լադենից Աֆղանստանում ու երեկ աշխարհին հեռուստաթերթերից ներկայացնում էր իր գնահատականները՝ նաեւ որպես անձ ներկայացնելով «Ալ Ղաիդայի» առաջնորդին:

Ամերիկյան հատուկ նշանակության ջոկատի իրականացրած գործողության մանրամասներ, բնականաբար, չհաղորդվեցին, միայն որոշ աղբյուրների համաձայն տարածվեց, որ սպանվել են եւս չորս մարդ, որոնցից մեկը՝ կին, ամերիկացի որեւէ զինվոր չի տուժել, իսկ «համար մեկ ահաբեկչին» սպանել են գլխին արձակած կրակոցով: Սպանության գործողություն սկսելու հրահանգը տվել է անձամբ Օբաման՝ դեռեւս անցյալ ուրբաթ:

«Չեմ կարծում, թե այս սպանությամբ ԱՄՆ-ը հաղթել է», ամերիկյան Կոլորադո նահանգի լիբերալ հայացքներ ունեցող փոքր քաղաքներից մեկում հեռուստացույցի առաջ հավաքված մի խումբ ամերիկացիներ այսպիսի մտքեր էին արտահայտում հենց այն պահին, երբ Բարաք Օբաման հայտարարություն էր անում Սպիտակ տնից: «Սա իրադարձություն է, բայց հիմա ինչպե՞ս է լինելու Աֆղանստանի հարցում, ի՞նչ պետք է անի ԱՄՆ-ը, ինչ է արվելու Իրանում առկա ստորաբաժանումների հետ»:

«Ես երբեք չէի մտածի, թե այս օրը կգա, երբ կսպանվի կամ կձերբակալվի բեն Լադենը», իրենց ուրախությունն այսպես էին ներկայացնում Նյու Յորքում սեպտեմբեր 11-ի ժամանակ Համաշխարհային առեւտրի կենտրոնի զույգ շենքերի տեղում մնացած «Զրո մակարդակ» կոչվող վայրում հավաքվածները CNN-ի թթերում:

Բեն Լադենի սպանության համար վրեժխնդրությունից զգուշանալու պատճառով ԱՄՆ իշխանությունները արտերկրի ամերիկյան դիվանագիտական առաքելություններում մեծացրել են անվտանգության հանդեպ ուշադրությունը, հավանական է համարվում, որ որոշ երկրներում գործող ԱՄՆ դեսպանատները մի քանի օրով կփակվեն:

Տեսիլքների, անուրջների նկարիչը

Էդվարդ Վարդանյանի գեղանկարչության հիմնական արտահայտչամիջոցը գույնն է: Հոբելյանական նրա ցուցահանդեսը, որ այս օրերին Նկարչի տան առաջին հարկի սրահում է ընթանում, գունային բաց դաշտի է նման՝ հանդարտ փռված հայացքիդ առաջ. նրա գունամտածողությունը կենսասիրական է, նկարչի ներաշխարհի ինքնաթարգմանը գույնի ակտիվ լեզուն է, ակնհայտ ոգեշիտիվ, սա կյանքի փառաբանում է՝ ինչ-որ տեղ իհարկե վերացարկված ռեալ ձեւերից: Նրա նկարչությունը նման է գունաոճնակում ադրումի ամեն հետք նոր երանգ ու ձեւ է ստանում. լվածությունը աննանային պատկեր է դառնում, փողոցի հին երգ, անձրեւոց օրվա հետք:

Շատ հաճախ են կտավի մակերեսներին հայտնվում ոդորկ-սահող վիճակներ, որ ստեղծում է նկարչի երեւակությունը՝ բազմաթիվ թեւող-թռչող ֆիգուրների միրաժային մթնոլորտի ազդեցությամբ: Սա կարծես փախուստ է իրական կյանքի թանձրություններից՝ ստեղծելու թեթեւ երեւակայական աշխարհ, ուր արվեստագետի հոգին բնակվում է ներքին հրձվանքով, ուր ճախրում են մտքեր ու երազներ, ու սահմաններ չկան ստոր ու ձկան, լուսնի ու ավազի համար...: Նրա նկարներում թաքնված ժոքիտն ու մեղմ հումորը հուշում են հեղինակի բարեհոգի մարդկային կերպարի մասին: Եվ, իրոք, Էդվարդ Վարդանյանը՝ Երեւանի գեղարվեստի ակադեմիայի երկարամյա պրոֆեսորը, որ շուրջ 13 տարի կերպարվեստի ֆակուլտետի դեկանն է եղել, սիրված դասախոս է, հմայիչ մարդ:

Դիմանկարի՝ փոքր-ինչ առանձնացող ժանրում նա դարձյալ հավատարիմ է նկարչական իր մաներաներին եւ գույնի հետ հարաբերություններին: Էքսպրեսիոնիզմում ցուցադրված դիմանկարները չեն տարբաժանվում մյուսներից, նկարչական միեւնույն մտածողության դաշտում են՝ ներդաշնակ ընդհանուրին: Այդպիսին են «Ինքնանկարը», նկարչի ծնողների, Պարույր Սեւակի, Արա Բեքարյանի, Արեստ Բեգլարյանի, Մուշեղ Գալշոյանի եւ մյուսների դիմանկարները:

Բնապատկեր, ուղղակի իմաստով, չես տեսնի այստեղ, սակայն բնության հետ նկարչի ներդաշնակությունը հուզական դրսեւորումներ է ձեռք բերում, նրա սերը բնության հանդեպ մանրանկարի ձեւերի մեջ այլաբանական երանգներ ունի. կենդանիների ու թռչունների, ֆարի ու խոտհարքի, ծառի ու ծաղկի հետ նրա կապը շատ մտերիմ է: Նա ընտրում է խորհրդապատկերներ ու դրանք վերազարդարում, հագցնում եւ այլաբանորեն կերպավորում նկարը: Լույսը՝ հիմնական խորհրդանշանը, գույնի բանալին է, որ իմաստավորում է այս աշխարհի նյութը: Դրանից առկայծում են երազներ, հույսեր ու սերեր, դրանք ծաղկում են ինչպես փոքրիկ բալենին («Ծաղկած բալենի»), կյանք առնում կամ մնում տեսիլքի պես անորոշ: Նրա Արարատը բոլորովին այլ է, լեռը երեւում է գյուղական բնակավայրերի կամ դաշտավայրերի հեռուներից եւ բնավ անմատչելի չէ, հակառակը՝ մոտ ու մտերիմ է:

Նկարներն ասես թեւեր ունեն ու սա երազից է նրանց մեջ պահվող, որ թռչում է հեռուներ՝ Արարատից այն կողմ՝ դեպի բարձր սարերը Սասնա, ցողաշաղախ դաշտերը Մշո, ուր ադրում է դեռ նախնիների ոգին, մշուշներում պահում հինավուրց ասքեր ու զրույցներ: Հեքիաթասացի երազից ծնվում է մեղեդին, գիշերերգը, որ կարոտ է դառնում, հիշատակներ հանգրվանում: Նա արքուն է պահում նախնյաց ավանդույթներն ու սովորույթների զարկը («Բարի լույս, թալինցիներ», «Արտամետի խնձորը»): Կյանքը, ակտիվ խաղի մեջ չներքաշելով, նկարիչը ստեղծում է այլընտրանքային, ներքին մտաշխարհային պատկերներ, վերածնվող ու անվերջ շարունակական սիմվոլներ: Այդ շարունակականության մեջ անցյալը, ներկան ու ապագան միաձույլ են, ժամանակի անտես վերացարկումով. ահա հեթանոսների նրա շարքը, նրանց կարմիր, տաք շարժումները: Ահա դաշտանկարը՝ արեւի վրձնած, ուր կյանքը նոր ձեւեր է առնում: Կյանքը՝ կանանց մերկ պարանոցներին, հուլորեն պառկած երազի գրկում, կիսակրկված՝ սպասման համբերությամբ, մոմի պես հալվող, փխրուն:

Գունային պատասառներին ցայտող արարածները, հավերն ու հրեշակները, ասղաձյունն ու փեսուրները, երկնային մարմինների թափանցիկ պատկերները ստեղծում են կախարդական շրջապտույտի պատրանք՝ տեսանելի ու անտեսանելի աշխարհների:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

«Անուրջներ»

«Կիրակի»

Կանցկացվի երաժիշտ-կատարողների «Վերածնունդ» միջազգային երրորդ փառատոնը

Մայիսի 5-ից 13-ը Գյումրիում կանցկացվի երաժիշտ-կատարողների «Վերածնունդ» միջազգային երրորդ մրցույթ-փառատոնը, որն այս տարի նվիրված է Հայաստանի անկախության 20-ամյակին: Արդեն ավանդական դարձած այս ամենամյա փառատոնը, որն անց է կացվում 2007 թվականից եւ 2009-ից դարձել է միջազգային, կոչված է նպաստելու երիտասարդ սերնդի գեղագիտական դաստիարակությանն ու երաժշտական ճաշակի ձեւավորմանը, ՀՀ մարզերում, Արցախում, Սփյուռքում երաժշտական կրթօջախներին օգնելուն, շնորհալի երաժիշտ-կատարողների հայտնաբերմանն ու երաժշտարվեստի զարգացմանը:

Փառատոնի մասնակիցների քանակն ու աշխարհագրությունը տարեցտարի ընդլայնվում է: Այս տարվա մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել 1200 երիտասարդ երաժիշտ-կատարողներ Հայաստանի բոլոր մարզերից եւ 21 երկրներից, այդ թվում՝ ԱՄՆ-ից, Արգենտինայից, Ուրուգվայից, Ռուսաստանից, ԱՊՀ եւ մերձբալթյան երկրներից, Վրաստանից, Ֆրանսիայից, Չինաստանից, Հունաստանից, Հարավային Կորեայից: Յոթ անվանակարգերով, չորս տարիքային խմբերում անցկացվելիք մրցույթի գնահատման մասնագիտական հանձնախմբերում ընդգրկված են 77 ճանաչված արվեստագետներ, երաժիշտ-կատարողներ, երաժշտագետներ աշխարհի տարբեր երկրներից:

Մրցույթ-փառատոնը, ինչպես եւ անցյալ տարի, կկայանա ՀՀ առաջին տիկին Ռիտա Սարգսյանի բարձր հովանու ներքո: Կազմակերպիչներն են ՀՀ մշակույթի եւ սպորտի նախարարությունները, «Փյունիկ» հիմնադրամը եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական երաժշտանոցի Գյումրու մասնաճյուղը: Գլխավոր հովանավորն է «Վիվասել-ՍՏՍ»-ը:

Փառատոնի շրջանակներում մայիսի 6-ին ու 7-ին կանցկացվի միջազգային գիտաժողով «Հայաստանը եւ համաշխարհային մշակույթը» թեմայով՝ նվիրված մեծանուն կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանի ծննդյան 90-ամյակին: Մասնակիցների համար կկազմակերպվեն նաեւ այլ միջոցառումներ, հանդիպումներ, այցելություններ Գյումրու եւ Շիրակի մարզի պատմամշակութային վայրեր ու կենտրոններ:

«Վերածնունդ» մրցույթ-փառատոնի յուրատեսակ շնորհանդեսը, կազմակերպված մամուլի ասուլիսից բացի, Մոնտեվիդեոյի (Ուրուգվայ) հայկական «Կռունկ» երգչախմբի երեկ նախատեսված համերգն էր կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի դահլիճում:

Գ. Մ.

ՄԵԿՆԱՐԿ

Երկխոսություն նորաձեւության լեզվով

«Բրիտանական խորհրդի» նախաձեռնությամբ եւ Եվրոմիության ֆինանսավորմամբ «Նորաձեւության ճանապարհ՝ երկխոսության սահմանների խաչմերուկում» ծրագրի երկամյա նախաձեռնությունը կմեկնարկի մայիսի 4-ին Գաֆեսճյան արվեստի կենտրոնում՝ միջազգային սեմինարով եւ վարպետության դասընթացի անցկացմամբ:

Մայիսի 4-ին եւ 5-ին ծրագրին մասնակից նկարիչ-մոդելավորողները՝ Արամ Նիկոլյան, Քրիստինե Ավետիսյան, Անի Իսկանդարյան, Լուսինե Կոստանյան, Գայանե Սողոմանյան, Զիանինե Պոլագոն, Պավել Իվանչիչ, Իդա Գրո Քրիստիանսեն, Անդրա Քլիցան, կմասնակցեն վարպետության դասընթացների: Նրանց համար կկազմակերպվի շրջագայություն Հայաստանի մշակութային վայրերում՝ նպատակ հետապնդելով եվրոպացի դիզայներներին ծանոթացնել հայկական մշակույթին, ճարտարապետությանն ու արվեստին:

Երկու տարվա ընթացքում նկարիչ-մոդելավորողները կուսումնասիրեն Հայաստանի, Միացյալ Թագավորության, Գերմանիայի, Ռումինիայի, Դանիայի եւ Չեխիայի ազգային տարազների պատմությունը, երկրների պատմությունն ու մշակութային ժառանգությունը, որը նոր գաղափարների ու ոգեշնչման հիմք կծառայի:

Կձեւավորվի աշխատանքային 5 զույգ՝ մեկ հայ եւ մեկ եվրոպացի նկարիչ-մոդելավորող: Յուրաքանչյուր զույգի առաջադրանքն է ծրագրի ավարտին ներկայացնել 4 մասից բաղկացած հավաքածու, որը պետք է արտացոլի փոխայցելությունների ընթացքում տեսած- ստացած տպավորությունները, երկիրների մշակութային ժառանգությունն ու ավանդույթները:

Մշակութային համատեքստում դիտարկելով տարազը՝ նկարիչ-մոդելավորողները հավաքածուներում ժամանակակից մոտեցումներով ու լուծումներով յուրովի կմեկնաբանեն երկրների մշակույթն ու ազգային ինքնությունը:

Ծրագրի ավարտին հավաքածուն կցուցադրվի Երեւանում եւ Հայաստանի 4 մարզերում, այնուհետեւ՝ մասնակից եվրոպական երկրներում:

Հավաքածուի ստեղծման նպատակն է ներկայացնել Հայաստանում Եվրոպայի, իսկ Եվրոպայում՝ հայկական մշակութային արժեքները, ինքնության պատմությունն ու մշակութային հարկայական ժառանգությունը:

Հ. Հ.

Հայաստանի մասնակցությունը գրքի միջազգային ցուցահանդեսներին

Հայ գրատպության 500-ամյակին ընդառաջ Հայաստանը ընդլայնում է իր մասնակցությունը գրքի միջազգային ցուցահանդեսներին եւ տոնավաճառներին: Ինչպես տեղեկացրեց ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը՝ մայիսի 5-15-ը Հայաստանը կմասնակցի Թեհրանի գրքի միջազգային 24-րդ ցուցահանդեսին փոխադարձ իրականացված թարգմանական գրքերով, մանկական, հանրագիտարանային, ինչպես նաեւ Ֆրիտյոֆ Նանսենին նվիրված գրականությամբ՝ գրքեր, վավերագրերի պատճեներ, ցեղասպանությանն առնչվող գրականություն: Տեղի կունենա նաեւ Տիգրան Դավթյանի՝ հայ դպրության 500-ամյակի առիթով հրատարակված հայերեն-պարսկերեն բառարանի շնորհանդեսը: Միջազգային ցուցահանդեսին Հայաստանից կմասնակցի Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի փոխտնօրեն Կարո Վարդանյանը:

Մ.Մ.

«Ոսկե ծիրան» կինոփառատոնի ֆիլմերի ընտրանին կցուցադրվի Նիդերլանդներում

Մայիսի 6-15-ը Նիդերլանդներում Filmhuis Den Haag-ը «The Best of Golden Apricot International Film Festival» խորագրի ներքո կներկայացնի «Ոսկե ծիրան» կինոփառատոնի 2008-2010 ֆիլմերի ընտրանին: Ֆիլմերի ցուցադրություններին, հաջորդող քննարկումներին ու զուգահեռ նախատեսվող միջոցառումներին ներկա կլինեն հայ եւ արտասահմանցի բազմաթիվ ռեժիսորներ, պրոդյուսերներ եւ տարբեր փառատոների ներկայացուցիչներ: Կցուցադրվեն Հարություն Խաչատրյանի «Սահման», Արման Երիցյանի եւ Ինա Սահակյանի «Հայաստանի վերջին լարախաղացը», Սուրեն Բաբայանի «Մի նայիր հայելուն», Դիանա Կարդումյանի «Աշնան արեւ» ֆիլմերը: Ինչպես նաեւ վերջին երկու տարիներին «Ոսկե ծիրան» կինոփառատոնի մասնակից Սիդդիք Բարմաքի «Ափիոնի պատերազմ», Գեորգ Օվաշվիլիի «Մյուս ափին», Անդրեյ Խրժանովսկու «Մեկ եւ կես սենյակ, կամ սենտիմենտալ ճանապարհորդություն հայրենիք», Լեւան Կոգուաշվիլիի «Փողոցային օրեր», Ռեհա Էդեմի «Կոսմոս», Սերգեյ Լոզնիցայի «Իմ ուրախություն» ֆիլմերը:

Մայիսի 8-ին նախատեսվում է քննարկում «Ռեժիսորներ առանց սահմանների» ծրագրի շրջանակներում, որին ներգրավված կլինեն փառատոնի բոլոր հյուրերը: Նախատեսվում է քննարկում տարածաշրջանում համագործակցության, Հայաստանում կինոյի վիճակի մասին:

Նույն ժամանակահատվածում այնտեղ տեղի կունենա նաեւ լուսանկարիչ Զավեն Խաչիկյանի «Ուրախ օր...» խորագրով ցուցահանդեսը: Այն ներկայացնում է զարգացող հասարակության ե՛ւ տառապանքը, ե՛ւ ուրախությունը:

Հայաստանից ցուցադրություններին ներկա կլինեն «Ոսկե ծիրան» կինոփառատոնի տնօրեն Հարություն Խաչատրյանը, գեղարվեստական տնօրեն Սուսաննա Հարությունյանը, կինոռեժիսորներ Սուրեն Բաբայանն ու Արման Երիցյանը:

Էլինա Դանիելյանը զգալիորեն առաջադիմել է

Լեւոն Արոնյանը պահպանել է տեղն ուժեղագույն եռյակում

Լեւոն Արոնյանը պահպանել է իր դիրքն ու վարկանիշը ՖԻԴԵ-ի դասակարգման նոր ցուցակում: Ինչպես մարտին, մայիսի 1-ի դրությամբ էլ Արոնյանը 2808 վարկանիշով աշխարհում 3-րդն է: Անփոփոխ են մնացել նաեւ ցուցակի մյուս երկու առաջատարների՝ Վիշվանաթան Անանդի (2817) եւ Մագնուս Կառլսենի (2815) ցուցանիշները: Լավագույն տասնյակում են նաեւ Վլադիմիր Կրամնիկը (2785), Վասիլի Իվանչուկը (2776), Սերգեյ Կարյակինը (2776), Վեսելին Թոփալովը (2775), Հիկարու Նակամուրան (2774), Շահրիյար Մամեդյարովն (2772) ու Վուղար Հաշիմովը (2760):

Կազանում մայիսի 5-ին մեկնարկող հավակնորդների մրցաշարի քառորդ եզրափակիչում Արոնյանի մրցակից Ալեքսանդր Գրիշչուկը 2747 վարկանիշով 10-րդ հորիզոնականից տեղափոխվել է 12-րդ տեղ:

Բացի Արոնյանից, 100 ուժեղագույն շախմատիստների ցանկում տեղ են զբաղեցրել Հայաստանը ներկայացնող եւս 3 շախմատիստներ, որոնք բոլորն էլ վաստակել են իրենց ցուցանիշները: Սերգեյ Մովսիսյանը 11-ով նվազեցրել է վարկանիշը (2705) եւ 29-րդ տեղից նահանջել է 35-րդ հորիզոնական: Նահանջը շարունակվում է մեր ամենափորձառու գրոսմայստերներից մեկի՝ Վլադիմիր Հակոբյանի մոտ: Կար ժամանակ, որ նա 2700-ից բարձր վարկանիշ ունեցող էլիտար գրոսմայստերների թվում էր: Իսկ ներկայումս Հակոբյանը 2670 վարկանիշով 71-րդ տեղում է: Նա վարկանիշը նվազեցրել է 5-ով, նահանջել է 4 հորիզոնականով: Հետընթաց է ունեցել նաեւ Գաբրիել Սարգսյանը, որը վարկանիշը (2663) նվազեցրել է 13-ով ու 65-րդ տեղից նահանջել է 79-րդ հորիզոնական: Իսկ ահա ֆրանսահայ Տիգրան Ղարամյանը 11-ով ավելացնելով վարկանիշը (2661), 98-րդ տեղից տեղափոխվել է 82-րդ հորիզոնական:

Կանանց վարկանիշային ցուցակը 2699 գործակցով գլխավորում է Հուդիթ Պոլգարը: Եվս 2 շախմատիստուհիներ՝ Համոի Կոներուն (2614) եւ աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Հոու Յիֆանը (2612) 2600 -ից բարձր վարկանիշ ունեն:

Զգալի առաջընթաց է ունեցել Էլինա Դանիելյանը, որը վարկանիշն (2506) ավելացրել է 31-ով ու 25-րդ տեղից տեղափոխվել է 14-րդ հորիզոնական: Անցած տարվա սեպտեմբերից սկսած Էլինան ամեն անգամ բարելավում է իր ցուցանիշը: Նրա ներկայիս վարկանիշը 2-րդն է Էլինայի մարզական կարիերայում: Ավելի բարձր վարկանիշ (2513) Էլինան ունեցել է 2008-ի հոկտեմբերին՝ եզրափակելով լավագույն տասնյակը: Դա Էլինայի համար առայժմ ամենաբարձր տեղն է եղել դասակարգման ցուցակում: Ընդհանրապես Դանիելյանը 3-րդ անգամ է հասում 2500-ի սահմանագիծը: Նախկինում դա նրան հաջողվել է նաեւ 2009-ի ապրիլին (2502):

Իսկ 100 ուժեղագույն շախմատիստուհիների ցանկում ընդգրկված մեր մյուս 2 շախմատիստուհիները նահանջել են: Լիլիթ Մկրտչյանը վարկանիշը (2468) նվազեցրել է 7-ով եւ 26-րդ տեղից նահանջել է 31-րդ հորիզոնական: Լիլիթ Գալոյանն էլ թեեւ պահպանել է վարկանիշը (2377), սակայն 3 հորիզոնականով նահանջել է՝ գրավելով 87-րդ տեղը:

Թեեւ հայ շախմատիստներից շատերը նվազեցրել են իրենց ցուցանիշները, սակայն Հայաստանը ՖԻԴԵ-ի անդամ 142 երկրների ցուցակում 4-րդ տեղում է: Մեր երկրի միջին վարկանիշը 2654 է: Առջեւում են Ռուսաստանը (2734), Ուկրաինան (2696) եւ Չինաստանը (2659): Ադրբեջանն այդ ցանկում 10-րդն է (2639):

Մինչեւ 20 տարեկան շախմատիստների ցանկում Սամվել Տեր-Սահակյանը 2592 վարկանիշով 16-րդ տեղում է: Դասակարգման ցուցակը գլխավորում է իտալացի Ֆաբիանո Կարուանան (2714):

«Փյունիկը» չօգտվեց «Ուլիսի» անհաջողությունից

7-րդ տուրի հանդիպումներով ավարտվեց ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության առաջին շրջանը: Անդրանիկ պարտությունը կրեց առաջնության առաջատար «Ուլիսը», որը սեփական հարկի տակ 0-1 հաշվով զիջեց «Իմպուլսին»: Այդ խաղում «Ուլիսի» կազմում բացակայում էին հիմնական կազմի 5 ֆուտբոլիստներ, գլխավոր մարզիչ Սեւադա Արզումանյանն էլ «Շիրակի» հետ գավաթի կիսաեզրափակիչ հանդիպման ժամանակ հեռացվել էր տեխնիկական գոտուց եւ որակազրկված էր: Հանդիպման ելքը վճռեց 56-րդ րոպեին հյուրերի ֆուտբոլիստ Ռոման Հարկուշայի խփած միակ գնդակը: «Ուլիսի» 4 անընդմեջ հաղթանակների շարքն ընդհատվեց: Թիմն ընթացիկ առաջնությունում 2-րդ անգամ չկարողացավ գրավել մրցակցի դարպասը:

«Ուլիսի» անհաջողությունից կարող էր օգտվել երկրի չեմպիոն «Փյունիկը», եթե տուրի կենտրոնական խաղում հաղթեր «Միկային»: Վերջինս 2 անընդմեջ պարտություններից հետո միավորներով զգալիորեն հետ էր մնացել առաջատարներից: Անհաշտ պայքարում ընթացած այդ մրցավեճում հանգուցալուծումը տեղի ունեցավ խաղավերջում: 86-րդ րոպեին սեփական տուգանայինում Վարազդատ Հարությանը վայր գցեց Կոնստանտին Մանդրիչենկոյին եւ մրցավարը «Փյունիկին» պատժեց 11 մ հարվածով: Էդնեյի առաջին հարվածը հետ մղեց «Փյունիկի» երիտասարդ դարպասապահ Կարեն Իսրայելյանը, սակայն գնդակը կրկին հայտնվեց բրազիլացու մոտ, որը գրավեց դարպասը: Այսպիսով «Միկան» առաջին անգամ «Փյունիկին» հաղթեց հյուրընկալվելիս:

Թիմերի մարզիչների կարծիքն այսպիսին է.

Վարդան Մինասյան («Փյունիկ»)-Առաջին խաղակեսում փյունիկցիները հաջող խաղացին: Դժվար էր ճեղքել «Միկայի» զանգվածային պաշտպանությունը: Ընդմիջումից հետո մեր թիմն այնքան էլ հաջող չգործեց: Այս խաղում հաղթելու էր այն թիմը, որը գոլ կխփեր: Դա հաջողվեց «Միկային», որն արժանի հաղթանակ տոնեց:

Արմեն Շահգելդյան («Միկա»)-Շատ ուրախ եմ, որ հաղթեցինք «Փյունիկին», քանի որ առաջնությունում միավորների զգալի կորուստ ենք ունեցել: Շատ գոհ եմ սաներից հատկապես 2-րդ խաղակեսում ցուցադրած խաղի համար: Տեղյակ էի, որ «Փյունիկին» հազվադեպ ենք հաղթել (հերթական հաղթանակն ընդամենը 4-րդն էր), սակայն չգիտեի, որ առաջին անգամ պարտության մատնեցինք հյուրընկալվելիս:

Առաջնության մասնակիցներից այժմ միայն Կապանի «Գանձասարը» չի պարտվել: Կապանցիները շատ հաջող են խաղում ընթացիկ առաջնությունում: Հերթական խաղում «Գանձասարը» սեփական հարկի տակ 2-0 հաշվով հաղթեց «Բանանցին»: Հաշիվը 2-րդ խաղակեսի սկզբում բացեց ՀՀ առաջնությունների ամենաարդյունավետ ֆուտբոլիստ Արսեն Ավետիսյանը՝ խփելով 193-րդ գոլը: Քիչ անց Վիրգին Մարշավելան կրկնապատկեց հաշիվը:

Վերջապես անհաջողությունների շարքն ընդհատեց «Արարատը»՝ Իջեւանում ոչ-ոքի ավարտելով հանդիպումը «Շիրակի» հետ: Առաջին խաղակեսում հաշիվը բացեց Անդրանիկ Բարիկյանը, ընդմիջումից քիչ հետո Արա Հակոբյանը վերականգնեց հավասարակշռությունը:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ուլիս	7	5	1	1	13-5	16
2. Գանձասար	7	4	3	0	8-3	15
3. Փյունիկ	7	4	1	2	11-7	13
4. Միկա	7	3	2	2	9-6	11
5. Իմպուլս	7	3	1	3	9-8	10
6. Շիրակ	7	1	3	3	6-9	6
7. Բանանց	7	0	3	4	7-13	3
8. Արարատ	7	0	2	5	3-15	2

Ռմբարկուները

Գեորգի Կրասովսկի	«Ուլիս»	3
Նարեկ Բեգլարյան	«Միկա»	3
Արսյոմ Ադամյան	«Ուլիս»	3
Բրունո Կորեա	«Բանանց»	3
Մարկոս Պիզելի	«Փյունիկ»	3
Զավեն Բադոյան	«Իմպուլս»	3
Անդրանիկ Բարիկյան	«Շիրակ»	3

ԲՈՆՑՔԱՄԱՐՏ

Հայրապետյանն ու Ալոյանը ՌԴ չեմպիոններ

Ուֆայում ավարտված բռնցքամարտի Ռուսաստանի առաջնությունում հայազգի երկու ճանաչված բռնցքամարտիկներ՝ Դավիթ Հայրապետյանը (49 կգ) եւ Միշա Ալոյանը (52 կգ) նվաճել են երկրի չեմպիոնի տիտղոսը: Դավիթը եզրափակիչում 6-4 հաշվով պարտություն է մատնել Բելիկ Գալանովին, իսկ Ալոյանը առավելության է հասել Գեորգի Բալակշինի նկատմամբ (19-12): 64 կգ քաշայինների մրցավեճում էլ Ավագ Ուզլյանն արժանացել է բրոնզե մեդալի:

Առաջնության արդյունքներով Դավիթ Հայրապետյանն ու Միշա Ալոյանն ընդգրկվել են Ռուսաստանի հավաքականի կազմում եւ կմասնակցեն սեպտեմբերին Բաքվում կայանալիք աշխարհի առաջնությանը:

Արթուր Աբրահամն առայժմ Գերմանիայում է

Արթուր Աբրահամն առայժմ չի պատրաստվում մեկնել ԱՄՆ, որտեղ մայիսի 14-ին Super Six մրցաշարի կիսաեզրափակիչում նախատեսված է նրա մենամարտն ամերիկացի Անդրե Ուորդի հետ: Ինչպես արդեն տեղեկացրել ենք, Կալիֆորնիայի աշլեթիկական հանձնախումբը խախտելով նախապես ձեռք բերած պայմանավորվածությունը, որոշել է ռինգի մրցավարին եւ եզրային մրցավարներից մեկին նշանակել Կալիֆորնիայից, ինչը հարուցել է Աբրահամի թիմի արդարացի բողոքը: Բացառված չէ, որ այդ մենամարտը չկայանա:

«Այդ հարցը պետք է արդարացի լուծում ստանա: Սա պարզապես ծիծաղելի է: Մենք չենք հասկանում, թե ինչու են Գուսենն ու նրա կողմնակիցները նման ձեւով վարվում: Առանց այն էլ Ուորդը հայրենիքում է մենամարտելու: Հնարավոր է, որ այս ամենն արվում է այն մտավախությամբ, թե Արթուրն ընդունակ է մեկ հարվածով հաղթել Ուորդին: Գուսենը հասկացել է, որ այս անգամ Ուորդին կարող է պաշտպանել միայն մրցավարներին Կալիֆորնիայից նշանակելու միջոցով, որպեսզի առանց մենամարտի եզրափակիչի ուղեգիր նվաճեն», նշել է Աբրահամի պրոմոութեր Վիլֆրիդ Զաուերլանդը:

Դարչինյան-Մարես մենամարտը թերեւս կայանա ամռանը

Շատ հնարավոր է, որ քաշային երկու կարգերում աշխարհի նախկին չեմպիոն Վախթանգ Դարչինյանը ռեւանշ մենամարտ անցկացնի մեքսիկացի Աբներ Մարեսի հետ: Հայ բռնցքամարտիկն անցյալ տարվա դեկտեմբերին մրցավարների որոշմամբ միավորներով պարտվել էր Մարեսին թեթեւագույնքաշային կարգի չորս ուժեղագույն բռնցքամարտիկների մրցաշարի կիսաեզրափակիչում:

Օրերս Դարչինյանը հաղթելով Յոնի Պերեսին, այդ մրցաշարում գրավեց 3-րդ տեղը: Իսկ մրցաշարի հաղթողը չորոշվեց, քանի որ Աբներ Մարեսի եւ Ժոզեֆ Ագբեկոյի մենամարտը չկայացավ վերջինիս հիվանդության պատճառով:

Ըստ Հերի Շոուի, եթե Ագբեկոն մոտ ժամանակներս ռինգ չվերադառնա, ապա կդիմի IBF-ին աշխարհի չեմպիոնի ժամանակավոր տիտղոսի համար մենամարտ կազմակերպելու Դարչինյանի եւ Մարեսի միջեւ: Վերջինիս պրոմոութեր Ռիչարդ Շեֆերը տեղեկացրել է, որ մրցաշարի կազմակերպիչ Showtime հեռուստաընկերությունն արդեն խոստացել է ամառվա վերջին ցուցադրել Մարեսի հաջորդ մենամարտը:

Երեք մրցանակակիր

Անկարայում առաջին անգամ անցկացված համաշխարհային մանկական խաղերում, որին մասնակցեցին 90 երկրների շուրջ 3000 մարզիկներ, հաջող ելույթներ ունեցան մեր պատանի ձյուդոյիստները: Մինչեւ 38 կգ քաշային կարգում էդգար Գառնիկյանը նվաճեց արծաթե մեդալ, իսկ Կառլեն Ղազարյանն (50 կգ) ու Գոռ Հակոբյանը (42 կգ) դարձան բրոնզե մրցանակակիրներ:

Արկադի Անդրեասյանը որակազրկվեց 10 խաղով

«Փյունիկի» հետ հանդիպման ընդմիջմանը ֆոտոլրագրող Աշոտ Առուշանյանին հարվածելու համար ՀՖՖ կարգապահական կոմիտեն 10 խաղով որակազրկել է «Արարատի» գլխավոր մարզիչ Արկադի Անդրեասյանին, ակումբը տուգանվել է 250 հազար դրամ: Բացի այդ, ՀՖՖ կարգապահական կոմիտեն գործկոմի ֆինանսականն է ներկայացրել Արկադի Անդրեասյանին ֆուտբոլում անցանկալի անձ ճանաչելու առաջարկը:

Անդրեասյանի որակազրկման ընթացքում «Արարատի» ղեկը ժամանակավոր ստանձնել է Ալբերտ Սաֆարյանը, որը մարզչական «A» կարգի արտոնագիր ունի: Նրան օգնում են Սամվել Դարբինյանն ու էդգար Սաֆարյանը:

Հայ պատանիները 7-րդն են

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 17 տարեկանների հավաքականը Ղազախստանի նախագահի գավաթի մրցաշարում գրավեց 7-րդ տեղը՝ վերջին խաղում 2-0 հաշվով հաղթելով Ուզբեկստանի ընտրանուն: Առաջին խաղակեսում Վարդան Բակալյանն ու Սարգիս Շահինյանը գրավեցին մրցակցի դարպասը:

5 մլն դոլար Պակյաոյի հետ մենամարտելու համար

Top Rank պրոմոութերական ընկերությունը թեթեւքաշային կարգում WBA-ի եւ WBO-ի վարկածներով աշխարհի չեմպիոն, մեքսիկացի Խուան Մանուել Մարկեսին 5 մլն դոլար պարգեւավճար է խոստացել կիսամիջինքաշային կարգում WBO-ի վարկածով աշխարհի չեմպիոն, ֆիլիպինցի Մենի Պակյաոյի հետ 3-րդ մենամարտն անցկացնելու համար: Անկախ մենամարտի արդյունքից, Մարկեսը կստանա նախատեսված պարգեւավճարը գումարած մենամարտի հեռարձակումից նախատեսված որոշակի գումար:

Էջը պատրաստեց **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

Օրվա հետքերով

1-ին էջից

«Գնում ենք, լողանում ենք գետում, օգնում ենք՝ ջուր քաշել պոմպերով», «խոստովանում» է հենրիկը: «Իսկ բրդերի կամ թուրքերի չե՞ք հանդիպում», հարցնում եմ պարսատիկի մեջ քար տեղադրող հենրիկին: «Տեսնում ենք բուրդ հովիվների, բայց չենք խոսում իրենց հետ, իրենք էլ՝ մեզ. իրար լեզու չգիտենք»: «Բա պարսատիկովդ ո՞ւմ ես կրակում, սահմանից մյուս կողմ կրակո՞ւմ ես», հարցնում եմ. «Չէ, մենակ ծիտիկներին, մեկ-մեկ էլ հարեւանի հավերին», չարաճճի ժպիտով ասում է հենրիկը՝ հավելելով. «Ոչ բրդերին, ոչ էլ իրենց անասուններին չեմ կրակում. իրենք հեռու են՝ չի հասնի: Դամ էլ՝ իրենք էլ մարդ են, պարաս ասում է՝ մարդուն կրակել չի կարելի...»: Հարեւանի «չսիրած»

Անիի Մայր տաճարը

Աշխարհի ամենաձիծաղելի եւ ողբերգական փալարը



Երեւում են Անիի բերդի պարիսպները

աքլորին տեսնելով՝ հենրիկը, նախաքարասելով պարսատիկը, հեռանում է: Հասցնում եմ իմանալ միայն նրա ցանկությունը՝ թե ի՞նչ է դառնալու, երբ մեծանա. «Կամուրջ սարքող եմ դառնալու: Ուզում եմ Ախուրյանի վրա կամուրջ սարքել, որ մեր տնից կարողանամ գնալ գետի մյուս ափը», ասում է հենրիկը, չնայած գյուղի միակ դպրոցի (որտեղ սովորում է նա) պատերին փակցված հայտարարություններին՝ որտեղ հրավիրվում են հայ տղաներ՝ ռազմական ուսումնարաններում սովորելու եւ զինվորական դառնալու:

Այդ ուսումնարաններից մեկում սովորում է 55-ամյա տիկին Վալյայի որդին՝ Արմենը: Տիկին Վալյան ազգությամբ ռուս է՝ Ռյազան քաղաքից: Ամուսնանալով հայի հետ՝ արդեն 30 տարուց փիչ ավելի ապրում է Անիպեմզայում՝ հայ-թուրքական «փալարի» անմիջական հարեւանությամբ: Իմանալով, որ Անին տեսնելու համար ենք այստեղ՝ ռուս տիկինը հետաքրքրվում է. «Գոնե թողեցի՞ն ձորն անցնեք», «Ոչ», պատասխանում եմ, տիկին Վալյան հավելեց. «Դա, դե բա ոնց, լավ հողերը իրենց են վերցրել, վատը տվել ձեզ: Ու բոլորը մոռացել են, որ այս փալարը աշխարհի ամենաձիծաղելի փալարն է՝ մի երկիրը իրարից բաժանող...»: Տիկին Վալյայի ցանկությունն այն է, որ որդին ավարտելուց հետո ռազմական ծառայության անցնի հենց իրենց մոտ. «Բայց ամենամեծ ցանկությունս՝ որ վերանա այս անիմաստ փալարը. սա ես ոչ միայն որպես զինվորականի մայր եմ ասում, այլեւ՝ Հայաստանում ապրող ռուս կին», ասում է տիկին Վալյան՝ հրավիրելով իրենց տուն: Ի դեպ՝ տան անմիջապես դիմաց մի ուշագրավ հուշարձան է՝ «1915, 1941-45, 1988 եւ 1991-94-ի զոհվածների հիշատակին» մակագրությամբ: Հուշարձանի կողքին՝ պատի վրա, ներկված է ՌԴ պետական դրոշը:

«Հայր մերը»՝ բարձրաձայն

Ռուս զինվորականները, ռուսական սահմանապահ կետերը ու դրանց վրա փողփողացող ՌԴ պետական դրոշը չնայած բնորոշում են Հայաստանի սահմանամերձ այս բնակավայրը, բայց իհարկե ոչ ամբողջությամբ: Գյուղն ունի խմելու ջրի խնդիր, ջուրը սովորաբար պոմպալցվում է Ախուրյան գետից, որի այս հատվածն, ինչպես նշեցինք, փալարից այն կողմ է: Փոխարենը՝ գյուղում անցկացրած շուրջ 2 ժամվա ընթացքում տեսանք արտասահմանյան 5-6 թանկարժեք մերենաներ, ամեն թաղամասում՝ 6-7 արբանյակային ալեհավաքներ, ընդհանուր առմամբ՝ մեկ-երկու խանութ, որտեղ կարելի է գնել, անգամ ամենաթանկ սիգարետները: Ընդհանուր առմամբ՝ Անիպեմզան շատ փիչ բանով է տարբերվում Անի մայրաքաղաքից: Եթե վերջինում մենք տեսանք ավերակ դարձած հնամենի եկեղեցիներ, ապա Անիպեմզայում՝ ավերակ դարձած շենքեր ու շինություններ, որտեղ, սակայն, ապրում են մարդիկ:

Անիպեմզայում, հենց փալարից մի քանի մետր այս կողմ, Երերուքի տաճարն է՝ քրիստոնեության ամենավաղ շրջանի՝ 3-4-րդ դարերում կառուցված: Տաճարն այսօր տանիք չունի, պատերից շատերը փլուզված են, խարխլված, իսկ կանգուններին վրա կարելի է կարդալ մակագրություններ «Ա+Մ» մակարդակի: Ժամանակագրության առումով «ռեկորդակիրն» այս մակագրությունների ոմն Սերգեյն է, որը տաճարի պատին ռուսերենով գրել էր՝ «Սերգեյ+Գրիշա՝ ընկերներ. 1939 թվական», իսկ լկտիության առումով «ռեկորդակիրը» թերեւս ամաչել է ստորագրել իր «գլուծգործոցի» տակ՝ Երերուքի տաճարի պատին պատկերելով մերկ կին:

Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներն ու նրանց միացած էջմիածին քաղաքի պատվիրակությունը հայոց հինավուրց տաճարում բարձրաձայն հնչեցրեցին «Հայր մերը»: Ճիշտ նույն ժամանակ, տաճարի բակում կանգ առավ BMW-5 մակնիշի մերենա, որից ելան 4 երիտասարդներ՝ «հաց ուտելու» «աշխարհահռչակ» Թաթուլի երգերի հնչյունների ներքո: Լավ, եթե արդարացիորեն բողոքում ենք, որ թուրքերն ավերել, սրբապղծել ու հրաժարվում են վերականգնել մեր եկեղեցիները, ապա ո՞վ է շարունակում սրբապղծել ու ո՞վ է հրաժարվում վերակառուցել մեր եկեղեցիները Հայաստանում: Եթե արդարացիորեն բողոքում ենք, հուզվում, բարկանում, որ բրդերի ոչխարները մեր հինավուրց եկեղեցիներն են մտնում՝ այնտեղ հետքեր թողնելով, ապա ո՞ւմ ոչխարներն են հետքեր թողել կոնկրետ Երերուքի տաճարի ներսում:

«Հայր մերը»՝ մտովի

Անիպեմզա մենք եկանք Անի մայրաքաղաքից հետո: Այո, աշխարհի ամենաձիծաղելի փալարը մեզ համար բացեցին, եւ շուրջ 60 հայաստանցիներով կանգնեցինք պատմական Անի հողին, չնայած այդպես էլ թույլ չտվեցին մտնել դե յուրե Թուրքիայի Հանրապետության տարածք: Մենք մտանք 1921-ին գծված ԽՍՀՄ-Թուրքիա առ այսօր պահպանվող սահմանի չեզոք գոտի: Ընդամենը դիմահայաց ձորն անցնելուց հետո, Անիի Մայր տաճարի ու «1000 ու մեկ եկեղեցու» մնացած ավերակները մենք կարող էինք անգամ շոշափել, սակայն ձորից այն կողմ մեզ արգելեցին առաջանալ: Շուրջ 60 հայերով ձորի այս բերանին միասողան կանգնած նայեցինք ու տեսանք Անին՝ նրա եկեղեցիներն ու բերդերը: Ձորի հակառակ կողմից մարդկանց (հավանաբար՝ բրդերի) մի խումբ նույնպես ուշադրությամբ նայում էր մեր ուղղությամբ, մի քանիսը նույնիսկ իջան ձորը՝ մեզ ընդառաջ, կարծելով, թե առաջանալու ենք եւ մենք: Հայերի շարքից ոչ ոք առաջ չգնաց. գրեթե բոլորիս հայացքները դեպի Անիի Մայր տաճար էին ուղղված, բոլորիս մտքում՝ «Հայր մերը», որը պիտի բարձրաձայնեինք փալարից այս կողմ՝ արդեն Երերուքի տաճարում:

Դժվար է ասել, թե դեռ որքա՞ն կանգուն կմնա աշխարհի ամենաձիծաղելի ու ողբերգական փալարը: Ե՞րբ Անի մայրաքաղաք կվերադառնան հայ քահանան ու հայ հավատացյալն՝ իրենց աղոթքներով, նույնպես դժվար է ասել: 12-ամյա հենրիկն իր՝ «կառուցելիք կամուրջով», եւ 55-ամյա տիկին Վալյան, նրանց մի քանի հարյուր համագյուղացիները շարունակում են ապրել «ավերակ» Անիպեմզայում, ավերակ Անի մայրաքաղաքից փալարերով սահմանազատված:

Փալարն այդ միայն չի բաժանում Անիպեմզան՝ Անի մայրաքաղաքից, Հայաստանը՝ Թուրքիայից, այլ բաժանում է նաեւ եկեղեցում աղոթող հային եկեղեցու պատին նկարող կամ դրա բակում Թաթուլ լսող հայից: Այս երկու փալարերն էլ նույնքան ծիծաղելի են, ողբերգական եւ անիմաստ...:

Հ.Գ.-Ուղեւորությունը պատմական Անիի տարածք նախաձեռնել էր Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության Երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիան, որի ներկայացուցիչներին միացել էին նաեւ էջմիածին քաղաքի պատվիրակները:

ՀԱՍԱՐՈՍ

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

Շաբաթ եւ կիրակի Ծաղկաձորում կազմակերպված «Մամուլի ազատություն» երկօրյա ֆորումի ժամանակ ստեղծվել է տեղեկատվական վեճերի խորհուրդ: Խորհուրդը ստեղծվել է մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հովանու ներքո:

Տեղեկատվական վեճերի խորհրդի գործը պետք է լինի զրպարտությանը, վիրավորանքին, մասնավոր կյանքի պաշտպանությանը եւ տեղեկատվական ազատությանը վերաբերող դատական գործերի կապակցությամբ խորհրդատվական բնույթի մասնագիտական եզրակացությունների հրապարակումը, ինչպես նաեւ օրենսդիր ու գործադիր իշխանություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, քաղաքացիներին համապատասխան հարցերում անհրաժեշտ խորհրդատվությամբ ապահովելը: Մի խորհուրդ ավել, մի խորհուրդ պակաս:

Մ. Խ.

Արամ Բարեղամյանին ազատ արձակելու որոշում

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը երեկ որոշում է կայացրել մարտի 1-ի գործով դատապարտված Արամ Բարեղամյանին պայմանական վաղաժամկետ ազատ արձակելու մասին: Արամ Բարեղամյանը մարտի 1-ին ոստիկանի նկատմամբ բռնություն կիրառելու մեղադրանքով դատապարտվել էր 6 տարվա ազատազրկման 316 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

Տնօրենին ազատեցին աշխատանքից

Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի հրամանով աշխատանքից ազատվել է Վաղարշապատի Գրիգոր Նարեկացու անվան թիվ 2 ավագ դպրոցի տնօրեն Սուսաննա Նազարյանը: Հրամանի համար հիմք են հանդիսացել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ եւ 6-րդ կետերը, 121-րդ հոդվածի 1-ին մասն ու 123-րդ հոդվածը:

Մինչ այդ նախարարի հրամանով դպրոցի տնօրենին հայտարարվել էր խիստ նկատողություն:

Հ. Հ.

Թուրքական զառանցանքներ

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանը կիսով չափ ադրբեջանաբնակ Իգդիրում խոսել է Հայաստանի եւ Ղարաբաղի մասին ու նկատել, թե Նախիջեւանն ու Ղարաբաղն իրենց խնդիրն են. «Ադրբեջանի տխրությունը մեր տխրությունն է, ուրախությունը՝ մեր ուրախությունը: Այստեղից եւս մեկ անգամ ասում եմ՝ առանց Ղարաբաղի խնդրի կարգավորման Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման մասին խոսք չկա: Սկզբից ի վեր մենք կանգնած ենք եղել Ադրբեջանի թիկունքում եւ շարունակելու ենք կանգնել: Այս խնդրում ոչ ոք մեզնից այլ բան թող չսպասի: ԵԽԽՎ-ում էլ որոշ հայ կամ հայերի կողմնակից պատգամավորներին էլ անհրաժեշտ պատասխանը տվեցի»,-նշել է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը հայտարարում է բաց մրցույթ «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն գիտությունների դոկտորի աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում և առնվազն երեք տարվա ղեկավար աշխատանքի փորձ:

Երևանի պետական համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա/ ինքնաառաջադրման դեպքում՝ գրավոր դիմում, իսկ ԵՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ կառուցվածքային ստորաբաժանման որոշումն առաջադրելու մասին և հավակնորդի գրավոր համաձայնությունը,

բ/ համալսարանի զարգացման և բարեփոխման հայեցակարգ (ծրագիր, հիմնադրույթներ),

գ/ երկու լուսանկար 3x4 չափսի,

դ/ աշխատանքային գրքույկի պատճենը (բոլոր էջերը վերջին աշխատանքի վայրի կադրային ստորաբաժանման կողմից հաստատված),

ե/ ինքնակենսագրություն,

զ/ բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

է/ կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված),

ը/ տեղեկանք՝ մշտական բնակության վայրից,

թ/ գիտությունների դոկտորի աստիճանի և պրոֆեսորի գիտական կոչումը հավաստող վկայականների պատճենը,

ժ/ հրատարակված գիտական աշխատանքների ցուցակ,

ժա/ բնութագիր վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել),

ժբ/ զինվորական գրքույկ կամ զինապարտության մասին փաստաթուղթ,

Մրցույթին մասնակցելու համար դիմումները (փաստաթղթերը՝ բնօրինակներով) ներկայացնել 2011թ. մայիսի 11-ից մինչև հունիսի 11-ը, ժամը՝ 10-ից 13-ը (բացի շաբաթ և կիրակի օրերից), Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության անձնակազմի կառավարման վարչություն:

Հասցեն. Գլխավոր պողոտա, Կառավարական տուն 3, սենյակ 613, հեռախոս 583-483:

Մրցույթը տեղի կունենա 2011 թվականի հունիսի 21-ին, ժամը 11:00-ին Երևանի պետական համալսարանում:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն

Հայտարարություն

Սույն թվականի մայիսի 11-ին, ժամը 12:00–ին ՀՀ Լոռու մարզի Թումանյանի քաղաքապետարանում տեղի կունենա «Արգիտի-1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Մարցիգես ՓՀԷԿ-2» ՓՀԷԿ-ի վերակառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երևան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85, 220218, 032250137, 032269033.

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 2.5.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: